ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

Հասցե՝ ՀՀ, Սյունիքի մարզ,ք.Կապան Շահումյան 20/32, 3301:
Հեռ. (+374 285)5 25 63
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1165: **գինը՝ 100 դրամ**

ISSN 1829-3468

ՇԱԲԱԹ, 12 ՀՈՒՆՎԱՐԻ 2019Թ.
№ 1 (491)

Սյունյաց Երկիր

www.syuniacyerkir.am

Կարեն Աբրահամյան. «Մենք ուշի-ուշով հետեւում ենք առաջնային գծում տիրող իրավիճակին եւ պատրաստ ենք ցանկացած զարգացման»

«Սյունյաց երկրի» հարցերին պատասխանում է Արցախի Հանրապետության պաշտպանության նախարար, Պաշտպանության բանակի հրամանատար, գեներալ-մայոր Կարեն Աբրահամյանը

- Պարոն գեներալ, նախ՝ ընդունեք մեր խմբագրակազմի, մեր ընթերցողների ջերմ շնորհավորանքը՝ Արցախի Հանրապետության պաշտպանության նախարար, Պաշտպանության բանակի հրամանատար նշանակվելու կապակցությամբ: Ձեզ հաջողություն ենք մաղթում:

-Շնորհակալություն:

- Ինչպե՞ս անցավ ՊԲ նախարարի առաջին օրը, ինչո՞վ էր այն տարբերվում նախորդ օրերից, ծառայողական երկար ու ձիգ տարիներից:

-Զինվորական մարդու համար ցանկացած պաշտոն ստանձնելը նախեւառաջ մեծ պատասխանատվություն է: Ընդունելով այս սկզբունքը՝ իմ ծառայողական կենսագրության ընթացքում միշտ էլ հակված եմ եղել պարտականություններս կատարել լիարժեք:

- Դուք Ձեր հարազատ միջավայրում, հարազատ զորքի հետ եք վերստին, այդուհանդերձ, զորքի, նրա հրամկազմի հետ բարոյահոգեբանական առումով ներդաշնակության խնդիր առաջացա՞վ:

-Որեւէ խնդիր չէր կարող ծագել, քանի որ, բացի նրանից, որ իմ մարտական ուղին սկսել ու անցել եմ այստեղ, նաեւ արդեն մեկ տարուց ավելի զբաղեցնում էի բանակի շտաբի պետի պաշտոնը: Իսկ դա լավագույն հնարավորություն էր ստեղծել մոտիկից ճանաչել

էջ 3

7-րդ գումարման Ազգային Ժողովի անդրանիկ նիստը՝ հունվարի 14-ին

Հայաստանի Հանրապետության նորընտիր ազգային Ժողովի անդրանիկ նիստը տեղի կունենա 2019թ. հունվարի 14-ին՝ ժամը 10-ին:

Նորընտիր խորհրդարանը բաղկացած է 132 պատգամավորից (6-րդ գումարման Ազգային Ժողովի պատգամավորների թիվը 105 էր):

Նորընտիր խորհրդարանում 88 պատգամավոր կունենա «Իմ քայլը» դաշինքը, 26 պատգամավոր՝ «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը, 18 պատգամավոր՝ «Լուսավոր Հայաստան» կուսակցությունը:

«Իմ քայլ»-ի չորս մանդատը տրվել է Հայաստանի եզդի, ռուս, ասորի եւ քուրդ ազգային փոքրամասնությունների մեկական ներկայացուցչի:

Ազգային Ժողովում Սյունիքի մարզից կլինի հինգ պատգամավոր. Նաիրա Զոհրաբյան («Բարգավաճ Հայաստան» կուսակցություն), Արմեն Խաչատրյան, Կարեն Համբարձումյան, Տիգրան Կարապետյան («Իմ քայլը» դաշինք), Սրբուհի Գրիգորյան («Լուսավոր Հայաստան» կուսակցություն):

Սյունեցի պատգամավորները Գորիսի ու Սիսիանի տարածաշրջաններից են:

Կապանի եւ Մեղրու տարածաշրջաններից պատգամավոր չկա 7-րդ գումարման Ազգային Ժողովում:

Հունվարի 10-ին Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնի շենքում տեղի է ունեցել 2018թ. դեկտեմբերի 9-ի արտահերթ ընտրության արդյունքում ընտրված պատգամավորների մանդատների հանձնման հանդիսավոր արարողություն:

«Սյունյաց երկիր»

Ես սովորել եմ հայերի լեզուն, որպեսզի հասկանամ՝ ինչ լեզվով են խոսել աստվածները, քանզի հայոց լեզուն աստվածների լեզու է... Եվ Հայաստանն աստվածների հայրենիք է, աստվածներն էլ ծնունդով Արարատյան դաշտից են:

Ջորջ Բայրոն

Սյունիքում վերահսկվում է սեյսմիկ իրավիճակը

Սպիտակյան երկրաշարժը վերջին 100-ամյակի ամենաաղետալի սեյսմիկ իրադարձություն էր Հայաստանի տարածքում, այն մեր երկրի մեկ երրորդը դարձրեց աղետի գոտի, որի հետեւանքները մինչեւ այժմ վերացված չեն: Աննախադեպ այդ տարերքի հետեւանքով զոհվեց մոտ 25 հազար մարդ, 19.500-ը դարձավ հաշմանդամ, իսկ 517 հազարը՝ անօթեւան, տնտեսությանը պատճառվեց 14.2 մլրդ ԱՄՆ դոլարի վնաս: Սպիտակ եւ Լենինական քաղաքներում, ինչպես նաեւ շրջակա գյուղերում ավերվեց բնակելի, վարչական եւ արտադրական շենքերի 85-90 տոկոսը, մասնավորապես հանրապետության բնակֆոնդի 17 տոկոսը:

Երկրաշարժը ցույց տվեց, որ Հայաստանի սեյսմապաշտպանական համակարգը թերի էր: Եվ միայն 1990-ականների սկզբին հիմնադրվեց ՀՀ կառավարությանն առընթեր սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայությունը (ՍՊԱԾ), իսկ ավելի ուշ՝ 1997 թվականի հունիսին Կապանում ստեղծվեց ծառայության հարավային բաժանմունքը:

Հայաստանը գտնվում է սեյսմակտիվ գոտում, մեր երկրում երկրաշարժեր եղել են եւ որքան էլ ցանկալի չէ, կլինեն: Այդ մասին են վկայում տարբեր ժամանակաշրջանում արձանագրված երկրաշարժերը, որ ավերածություններ են սփռել, մարդկային զոհերի պատճառ դարձել (1679թ., Գառնի՝ 9-10 բալ, 1840թ. հուլիսի 2, Արարատ՝ 9-10 բալ, 1931թ. ապրիլի 27, Զանգեզուր՝ 8-9 բալ, 1926թ. հոկտեմբերի 22, Լենինական՝ 8-9 բալ, 1988թ. դեկտեմբերի 7՝ 10 բալ):

Խնդիրն այն է, թե ինչպես կարելի է դիմագրավել բնական տարերքին, ինչ պետք է անել երկրաշարժի ընթացքում, ինչպես պետք է գործել տարերային աղետը պատուհասելուց հետո:

Այս հարցերի պատասխանն իմանալու նպատակով եղանք ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության (ԱԻՆ) «Սեյսմիկ պաշտպանության տարածքային ծառայություն» ՊՈԱԿ-ի հարավային տարածաշրջանային կենտրոնում: Տնօրեն Կիմ Բաղալյանը նոր մարդ չէ ծառայությունում: Ավարտել է Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտի լեռնամետալուրգիական ֆակուլտետը, ստացել ստորգետնյա կառույցների եւ շինությունների ինժեների որակավորում: Բուհն ավարտելուց հետո աշխատել է ռազմականացված լեռնափրկարարական Կապանի ջոկատում նախ՝ օպերատիվ գծով տեղակալ, իսկ այնուհետեւ՝ ջոկատի հրամանատար: 2009 թվականից տեղափոխվել է սեյսմիկ պաշտպանության համակարգ, 2014 թվականից ստանձնել տնօրենի պաշտոնը:

Նախքան տնօրենին հանդիպելը ծանոթանում ենք կենտրոնի միջանցքի ցուցանակներին՝

ա) շենքերի եւ շինությունների սեյսմակայունության բաժին,

բ) սեյսմիկ վտանգի գնահատման բաժին,

գ) բնակչության հետ տարվող աշխատանքների բաժին,

դ) դիտացանցի բաժին:

Կենտրոնի հիմնախնդիրներից Կ.Բաղալյանն առանձնացրեց հատկապես արհեստավարժ կադրերով սակավ ապահովվածությունը: Այսօրվա դրությամբ կենտրոնը 48 աշխատակից ունի: Խնդիրն այն է, որ մեր հարապե

էջ 8

Սյունիքում մեկնարկեց ձմեռային զորակոչը

Սյունիքի մարզի զինկոմիսարիատում անցած ուսումնական տարվա նոյեմբերից արդեն մեկնարկել եւ նախապատրաստական աշխատանքներ են տարվել 2018թ. ձմեռային զորակոչը պատշաճ մակարդակով անցկացնելու համար:

Անցած տարվա գարնանային եւ աշնանային զորակոչերի ժամանակ ցուցաբերած բարձր առաջադիմության համար ՀՀ ՊՆ-ում տարեկան արդյունքների ամփոփման ժամանակ Սյունիքը նորից ճանաչվել է լավագույններից:

2019թ. հունվարի 9-ին պատշաճ մակարդակով ու բարձր կազմակերպվածությամբ մեկնարկեց Սյունքի մարզի ձմեռային զորակոչը:

Արարողությանը մասնակցում էին 1-ին ԲԿ ԱՀՏԱ գծով հրամանատարի տեղակալ, գնդապետ Արթուր Թումանյանը, ՌՈ բաժանմունքի սպաներ, երկրապահ-ազատամարտիկներ, դպրոցականներ, մարզի տարածքների սերժանտական ակումբների սաներ, նորակոչիկների հարազատներ, Գորիս եւ Սիսիան քաղաքների հարյուրավոր քաղաքացիներ:

Զորակոչիկներին հրաժեշտի, բարի, անփորձանք ծառայության ու խաղաղության ջերմ խոսքեր ասացին Սյունիքի մարզի զինկոմ, գնդապետ Արարատ Մանուչարյանը, Գորիսի վետերանների խորհրդի նախագահ Խասան Հարությունյանը, ԵԿՄ տարածքային բաժանմունքի նախագահ, փոխգնդապետ Սուրեն Բաղդասարյանը, Գորիսի քաղաքապետի տեղակալ Մենուա Հովսեփյանը, Տեղ համայնքի ղեկավար Ներսես Շադունցը, Տաթեւ համայնքի ղեկավար Մուրադ Սիմոնյանը:

Օրհնանքի եւ խաղաղության խոսք հնչեցրեց Գորիսի տարածաշրջանի հոգեւոր հովիվ Տեր Ահարոն քահանա Մելքումյանը:

Հանդիպեցինք Սյունիքի մարզի զինկոմ, գնդապետ Արարատ Մանուչարյանին, զորակոչի մասին նա ասաց.

-2018թ. ձմեռային զորակոչն ընթացավ ըստ պլանի, բոլոր նորակոչիկները ներկայացել էին զորակոչի:

Ուրախությամբ նշեմ, որ զորակոչին նույնիսկ ՌԴ քաղաքներից ունեցանք երիտասարդներ, ովքեր հայրենյաց կանչով կամավոր եկել, ներկայացել էին, այսօր էլ զորակոչվեցին հայկական բանակ:

Ինչպես միշտ, բարձր էր զորակոչվող զինվորների մարտական ոգին, նրանք տիրապետում էին զինվորական նախնական գիտելիքներին, հրաշալի գիտակցում՝ ի՞նչ առաքելությամբ են մեկնում Հայոց բանակ ու հայրենիքի առջեւ ինչպիսի՞ պարտք ունեն կատարելու:

Զինկոմը միաժամանակ նշեց, որ համատեղ աշխատանքներ են կատարվել եւ կատարվում մարզային ու տեղական ինքնակառավարման մարմինների հետ՝ հաշվառված զինապարտ քաղաքացիների գրանցամատյանների, նրանց բոլոր տվյալները զինկոմիսարիատներ պարբերաբար ներկայացնելու ուղղությամբ:

Առողջական խնդիրներով ներկայացած նորակոչիկների մասին մարզի զինկոմն ասաց.

-Գաղտնիք չէ՝ մի շարք հիվանդություններ կարծես թե երիտասարդացել են: Այո, կային նաեւ առողջական խնդիրներ ունեցող նորակոչիկներ, ովքեր ներկայացված են Երեւան՝ կենտրոնական բժշկական հանձնաժողովի քննարկմանը:

Այստեղ նրանք մանրազնին կհետազոտվեն, հետո միայն՝ որոշում կկայացվի՝ զորակոչելու կամ տարկետում տալու մասին:

Ցավալի է, բայց շատ դեպքերում ծնողներն էլ տեղյակ չեն լինում, որ իրենց զավակները որեւէ հիվանդություն ունեն: Դրանք հայտնաբերվում են մեզ մոտ: Լինում են դեպքեր, երբ ծնողը բերում, ներկայացնում է որդուն, հետազոտում ենք, ու պարզվում է՝ որդին տառապում է ի ծնե կամ հետագայում ձեռք բերած այս կամ այն հիվանդությամբ:

Անհարգելի պատճառներով զորակոչից խուսափողներ չունեինք:

Այն հարցին, թե որո՞նք են պատճառները, որ երեխան հասնում է զորակոչային տարիքի, բայց առկա հիվանդությունները մինչ այդ չեն բացահայտվում, գնդապետ Ա Մանուչարյանն ասաց.

-Մեր ժողովուրդը լավ տեղեկացված չէ, որ երբ 16 տարեկան պատանին կցագրում է անցնում, պետությունը հենց այդ ժամանակվանից կազմակերպում է տվյալ անձի անվճար բուժումը:

Պարտաճանաչ ծնողներն անմիջապես ձեռք են առնում համապատասխան միջոցներ: Կցագրման ժամանակահատվածից մինչեւ զորակոչը երկու տարի ժամանակ կա, երեխան պետք է նորմալ բուժում ստանա, հետո միայն՝ զորակոչվի:

Այն հարցին, թե զորակոչերի ընթացքում լինո՞ւմ են բողոքներ ծնողների կողմից՝ կապված որդիների առողջական վիճակի հետ, գնդապետ Արարատ Մանուչարյանը պատասխանում է.

- Նման բողոքները մեզ մոտ անհետեւանք չեն անցնում: Յուրաքանչյուր բողոք մանրամասն եւ պարտադիր ուսումնասիրվում է մեր հանձնաժողովների կողմից, կատարվում են համապատասխան եզրակացություններ: Կենտրոնական բժշկական հանձնաժողովի վերջնական որոշումից հետո տվյալ անձը կամ զորակոչվում է կամ ձեւակերպվում տարկետում՝ երկարաձգելով անհրաժեշտ բուժումը:

Կարող են լինել բացառիկ դեպքեր, երբ զորակոչի ներկայացած երիտասարդը բացարձակ պիտանի չի լինում ոչ մի տեսակի ծառայության:

Այս զորակոչին, բարեբախտաբար, այդպիսի դեպք չունեցանք:

Զինվորական կոմիսարը վստահեցնում է, որ բանակից խուսափողների թիվը տարածաշրջանում կտրուկ նվազել է.

- Հայրենասիրական ոգին է բարձրացել մատաղ սերնդի շրջանում, առավել մեծ սիրով ու պատասխանատվությամբ են ներկայանում զորակոչի, ինչն անհնար է չնկատել:

Ընդհանուր առմամբ զորակոչի ներկայացածների մարտական ոգին աննախադեպ բարձր էր. ու ծնողներն էին հպարտ, որ իրենց զավակին ճանապարհում են հայկական բանակ, եւ նորակոչիկներն էին նախապատրաստված, հայրենասիրությամբ տոգորված:

Հայոց բանակ մեկնող նորակոչիկները զրույցում խոստացան պատվով ծառայել, քանի որ հայրենիքի, իրենց ընտանիքների անվտանգությունը երկու տարի կախված է լինելու նաեւ իրենց մարտական պատրաստվածությունից, բարձր պատասխանատվությունից:

***

Կարճատեւ եւ հուզիչ հրաժեշտից հետո, նորակոչիկներով լի ավտոբուսները մեկնեցին կենտրոնական հավաքայան, որտեղ անցկացվող վիճակահանությունից հետո նրանք կհամալրեն ՀՀ զինված ուժերի շարքերը:

Նորակոչիկներից ոմանք նախօրոք կվերապատրաստվեն ուսումնական կենտրոններում՝ ստանալով կրտսեր ենթասպայական կոչումներ, այնուհետ նրանք կանցնեն ծառայության՝ մշտական կցված համապատասխան զորամասերում:

Հայոց աշխարհին խաղաղություն, զինծառայողների շարքերը համալրած նորակոչիկներին՝ անփորձանք եւ աչալուրջ ծառայություն:

Սուսաննա Բաբաջանյան

Կարեն Աբրահամյան. «Մենք ուշի-ուշով հետեւում ենք առաջնային գծում տիրող իրավիճակին եւ պատրաստ ենք ցանկացած զարգացման»

«Սյունյաց երկրի» հարցերին պատասխանում է Արցախի Հանրապետության պաշտպանության նախարար, Պաշտպանության բանակի հրամանատար, գեներալ-մայոր Կարեն Աբրահամյանը

էջ 1

ինչպես ողջ զորքին, այնպես էլ հրամկազմին:

- Պատմեք մի քիչ Ձեր մարդ տեսակի մասին, Ձեր արած-չարածի, գոհությունների եւ ափսոսանքի մասին:

-Սովորական հայի տեսակ եմ: Արել եմ այնքան, որքան հնարավորություններս ներել են: Չեմ կատարել այնպիսի բան, որի համար կարելի է ափսոսալ: Աշխատել եմ միշտ ականջալուր լինել իմ խղճի ձայնին եւ հարգել դիմացինիս կարծիքը: Այսքանը:

- Ի՞նչ ոգով եք դաստիարակել Ձեր որդիներին. Ձեր ընտանիքի մանրանկարը:

-Ունեմ մեկ տղա եւ մեկ աղջիկ: Միշտ ձգտել եմ իմ ծնողներից ստացած դաստիարակությունը փոխանցել նրանց, ասել է թե՝ սիրել ու հարգել ընտանիքը, միջավայրը, հայրենիքը եւ այն ամենը, ինչը հարիր է մեծատառով մարդուն:

-Նախորդ նախարար, գեներալ-լեյտենանտ Լեւոն Մնացականյանի պաշտոնանկության հետ կապված քննարկումները չեն դադարում, բայց խնդիրը մեզ հետաքրքրում է մեկ այլ տեսակետից՝ արդյո՞ք նախարարի փոփոխությամբ Արցախում փոփոխվում են պաշտպանության ռազմավարությունը, առաջնահերթությունները:

-Նախ պետք է ասեմ, որ անչափ գնահատում եմ գեներալ-լեյտենանտ Մնացականյանի կատարածը մեր բանակի համար: Նրա պաշտոնավարման ընթացքում, իրոք, բավականին ծավալուն աշխատանք է իրականացվել Արցախի զինված ուժերի մարտունակության բարձրացման ուղղությամբ, առաջնագիծը դարձել է առավել հուսալի պաշտպանված ու անխոցելի: Միանշանակ է, որ այս ամենը պետք է շարունակվի: Իսկ ինչ վերաբերում է պաշտպանական ռազմավարության ոլորտում կատարվելիք փոփոխություններին, ապա դրանք եւս անխուսափելի են, քանի որ ժամանակի հետ փոխվում են նաեւ պահանջները: Առաջնահերթությունների մասով կասեմ, որ թիվ մեկ խնդիրը եղել ու մնալու է Արցախի անվտանգության ապահովումն ու ամրապնդումը:

-Ապրիլյան պատերազմի պատճառների, ընթացքի, հետեւանքների մասին, կարծեք, իրարամերժ գնահատականներ ենք լսում: Չենք թաքցնում՝ այդ առումով եւս Ձեր կարծիքը մեզ համար կարեւոր է:

-Ապրիլյան քառօրյա առճակատումը հերթական անգամ ապացուցեց, որ Պաշտպանության բանակն ունակ է լիարժեքորեն իրականացնել իր առջեւ դրված մարտական խնդիրը: Իսկ Ադրբեջանի ռազմաքաղաքական ղեկավարությունը, եթե ոչ բարձրաձայն, ապա իշխանական նեղ շրջանակներում, անկասկած, մեկ անգամ եւս հանգեց հետեւության, որ այն, ինչին նա հասավ, ոչ այլ ինչ էր, քան սխալ հաշվարկների արդյունք: Նման զորախմբերի ներգրավմամբ իրականացված գործողությամբ Բաքուն անհամեմատ մեծ հաջողությունների ակնկալիք ուներ, սակայն գրված ընդամենը մի քանի դիրքերի դիմաց ունեցավ հարյուրավոր զոհեր ու տասնյակների հասնող ռազմական տեխնիկայի կորուստ: Իսկ ինչ վերաբերում է ապրիլյան «հաջողությունների» մասին ալիեւյան ագիտպրոպի կողմից շրջանառվող հեքիաթներին, ապա դա ինքնախաբեություն է, ուրիշ ոչինչ:

- Ինչպե՞ս եք գնահատում արցախաադրբեջանական սահմանի օպերատիվ իրավիճակը, կարելի՞ է արձանագրել, որ հարաբերական անդորրի փուլ ենք թեւակոխել:

-Իրականում վերջին շրջանում համեմատաբար նվազել են հրադադարի ռեժիմի խախտման դեպքերը: Բայց դա ամենեւին չի նշանակում, որ իրավիճակը հեռու է պայթյունավտանգ լինելուց: Մենք ուշի-ուշով հետեւում ենք առաջնային գծում տիրող իրավիճակին եւ պատրաստ ենք ցանկացած զարգացման:

- Շատ է խոսվում (եւ ոչ միայն մամուլի մակարդակով) տարածաշրջանում ռազմաքաղաքական հավասարակշռության խախտված վիճակի մասին՝ հօգուտ Ադրբեջանի, որը շարունակում է խորանալ հատկապես Ռուսաստանի Դաշնության կողմից Ադրբեջանին արդիական զինատեսակներ վաճառելու հետեւանքով: Ձեր գնահատականը:

-Բանակի գործն է բարեխղճորեն կատարել իր առջեւ դրված յուրաքանչյուր խնդիր, եւ մենք դրանով ենք զբաղված: Իսկ ինչ վերաբերում է այդ «խոսակցություններին», ապա անհրաժեշտ պահին մենք դրանց պատասխանը կտանք: Ռազմական հավասարակշռության ամենաարդար գնահատականը կտա մարտադաշտը:

-Առհասարակ որքանո՞վ է ընդունելի, երբ քաղաքական բանավեճերի ընթացքում, զանգվածային լրատվամիջոցներում, սոցիալական ցանցերում (եւ շատ հաճախ խնդրո առարկային ոչ քաջատեղյակ մարդկանց կողմից՝ իրենց փորձագետ հորջորջող) քննարկում են բանակային հարցերը, սահմանային խնդիրները: Արդյո՞ք բացախոսությունն այդ ոլորտում գործին օգնող հանգամանք է:

-Չեմ կարող ասել, թե որքանով են նման բաց քննարկումներն օգնում բանակաշինության գործընթացին, բայց որ ռազմական ոլորտի մասին խոսելուց յուրաքանչյուր ոք պետք է հնարավորինս զգույշ լինի իր արտահայտություններում, դա իմ համոզմամբ միանշանակ է:

-Վերջին ամիսներին ԵԿՄ-ի դերն ու առաքելությունը եւս տարբեր կերպ են ընկալվում եւ մեկնաբանվում հայ հանրության մեջ: Ժամանակը չէ՞ արդյոք, որ այդ հարցում նույնպես որոշակիություն մտցնենք, ազատամարտի վետերանների փորձը խելամիտ օգտագործելու հստակ կոնցեպցիա ունենանք:

-Հիշենք, որ երկրապահները մեր երեկվա պատերազմում տարած հաղթանակը կերտողներն են եւ նրանց պետք է վերաբերվել հարգանքով: Ինչ վերաբերում է նրանց փորձը խելամիտ օգտագործելուն, ապա դա ոչ միայն ցանկալի, այլեւ պահանջված անհրաժեշտություն է: Ի դեպ պետք է ասեմ, որ այդ ուղղությամբ Արցախում իրականացվել եւ շարունակում են իրականացվել համակարգված գործընթացներ: Սակայն բավարարվել կատարածով, չի կարելի, դեռեւս ունենք բավականին անելիքներ:

- Իշխանության ներկայացուցիչները, երբեմն ամենաբարձր մակարդակով ու հրապարակավ, դժգոհություն են հայտնում զինվորների սննդի ոչ բավարար մակարդակի, արտահագուստի եւ կենցաղային այլ խնդիրների կապակցությամբ: Մենք նոր ենք վերադարձել Արցախի պաշտպանության հյուսիսարեւելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից, եղել ենք մարտական դիրքերում, ու ամենեւին էլ վատ չէ մեր տպավորությունը: Եվ, այդուհանդերձ, ինչպե՞ս եք գնահատում իրավիճակն այդ ոլորտում, ու ի՞նչ է ձեռնարկվում ներկայումս ժամկետային զինվորների ծառայության պայմանների բարելավման ուղղությամբ:

-Ասել, որ բանակային այդ ոլորտն անթերի է, ճիշտ չէր լինի: Բայց նաեւ սխալված կլինենք, եթե կատարված եւ կատարվող դրական գործընթացներին չտանք անաչառ գնահատական: Այսօր բանակի առաջնային գծից սկսած մինչեւ զորքերի մշտական տեղակայման վայրեր գտնվում են բանակի հրամանատարական կազմի, ինչու չէ՝ նաեւ պետական ու շահագրգիռ հասարակական կազմակերպությունների մշտադիտարկման ու խիստ վերահսկողության տակ, ինչը հնարավորություն է տալիս օբյեկտիվ եզրահանգումներ անել առկա իրավիճակի վերաբերյալ: Իսկ իրավիճակը, ըստ վերջիններիս կողմից արձանագրված արդյունքների, բավականին դրական դինամիկա ունի, եւ վստահեցնում եմ, որ այն լինելու է շարունակական:

- ՊԲ-ում ինչպիսի՞ արդյունավետությամբ է գործում սպայակազմի սոցիալ-տնտեսական, նրանց կենցաղային պայմանների բարելավման խնդիրների լուծումը: Կա՞ն նոր ծրագրեր այդ ուղղությամբ:

-Զինծառայողների եւ նրանց ընտանիքների սոցիալ-տնտեսական ու կենցաղային պայմանների բարելավումը մշտապես եղել է բանակային առաջնահերթություններից մեկը: Ակնհայտ ճշմարտություն է՝ եթե ուզում ենք սպան կամ ցանկացած պայմանագրային զինծառայող հավուր պատշաճի իրականացնի իր ծառայողական պարտականությունը, ապա պետությունը պարտավոր է հնարավորության սահմանում նպաստավոր պայմաններ ստեղծել նրանց կենցաղն ու ապրելակերպը բարելավելու համար: Այդ իսկ նպատակով, ինչպես երեկ եւ այսօր, այնպես էլ այսուհետ բանակի հրամանատարությունը հետամուտ է լինելու համակարգված կերպով առավել բարենպաստ պայմաններ ստեղծել զինծառայողների եւ նրանց ընտանիքի անդամների սոցիալական հիմնախնդիրները լուծելու, բնակարանային, առողջապահական եւ կենցաղային նշանակության այլ հարցերից նրանց ձերբազատելու համար: Համոզված եմ, որ դա մեզանում ստացվելու է:

- Ի՞նչն եք ամենից շատ գնահատում մարդու մեջ, ինչպիսի՞ խոսք ու խրատ ունեք մեր երիտասարդ սերնդին, արդյո՞ք նրանք դատապարտված են անվերջ մնալու պատերազմական իրավիճակում:

-Նախ ասեմ, որ պատերազմը մեր ընտրությունը չէ, մեզ պարտադրել են որդեգրել պատերազմի ճանապարհը, քանի որ հակառակ դեպքում կհայտնվեինք կործանման եզրին: Ելնելով այս իրողությունից՝ համոզված եմ, որ մեր երիտասարդ սերունդը կգիտակցի մեր ազգին նետված մարտահրավերի լրջությունը եւ իր հայրենասիրական առաքելությունը կկատարի ավելի փայլուն կերպով, քան նախորդ սերունդը, ասել է թե՝ իրենց հերոս հայրերն ու պապերը:

- Պարոն նախարար, Դուք նոր մարդ չեք ՊԲ-ում, վստահ ենք, որ զորքն ու ժողովուրդը Ձեզ սիրում եւ վստահում են, ինչպես սիրել ու վստահել են նախորդին: Այնուհանդերձ, ո՞րն է հրամանատարի գաղտնիքը՝ սիրո, հարգանքի եւ վստահության արժանանալու գործում: Արցախի եւ ՀՀ բնակչության, որ մի ամբողջություն են, խաղաղության ու անվտանգության երաշխիքների մասին:

-Յուրաքանչյուր ոք պետք է ունենա իր Ես-ը ու երբեւէ չդավաճանի ինքն իրեն: Շատ եմ կարեւորում, երբ ենթակայիդ ղեկավարում ես ոչ միայն հրամաններով, այլեւ նաեւ անձնական օրինակով: Սա այն գլխավոր սկզբունքն է, որով փորձել եմ մշտապես առաջնորդվել: Հակված եմ կարծելու, որ հենց սա է փոխադարձ հարգանքի ու վստահության տանող ճանապարհը: Նաեւ համոզված եմ, որ նման փոխհասկացողության պայմաններում է հնարավոր պահպանել ու բազմապատկել այն, ինչն այսօր ունենք:

- Ձեր շնորհավորանքի խոսքը մեր ընթերցողներին, ինչպես եւ հայ ժողովրդին՝ Ամանորի եւ Սուրբ ծննդի առիթով:

-Ջերմորեն շնորհավորում եմ մեր ժողովրդին եւ ձեր բազմահազար ընթերցողներին՝ Ամանորի եւ Սուրբ ծննդի տոների առթիվ ու վստահեցնում, որ ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2019 թվականին Արցախի զինված ուժերը կշարունակեն փայլուն կերպով կատարել Հայոց արեւելաց սահմանների պաշտպանության պատվավոր առաքելությունը:

Եղեք միաբան եւ ձեր նպատակներում հետեւողական:

Թող որ 2019 թվականը մեր ազգի համար լինի նորանոր նվաճումների տարի:

- Շնորհակալություն հարցազրույցի համար, բարի եւ անփորձանք ծառայություն Ձեզ ու մեր զորքերին:

Սամվել Ալեքսանյան

27 դեկտեմբերի 2018թ.

Արամ Խաչատրյանի հետ

Անցած տարին Արամ խաչատրյանական էր, լրացավ հայ մեծանուն կոմպոզիտորի 115-ամյակը: Նա հայ ազգային առաջին՝ «Երջանկություն» բալետի, Հայաստանի Խորհրդային Հանրապետության օրհներգի հեղինակն է, Հայկական կինոերաժշտության հիմնադիրը. հանրաճանաչ գործերից են «Գայանե» եւ «Սպարտակ» բալետները, որոնք բեմադրվել են բազմաթիվ երկրների բալետային թատրոններում: Ըստ երաժշտագետների՝ Խաչատրյանի երաժշտությունը միայն այս երկու բալետի համար կարող է դասվել ամբողջ աշխարհում ամենաճանաչված դասական երաժշտության շարքին: Գրել է երաժշտություն թատրոնի եւ կինոյի համար («Վալենսիայի այրին», Մ.Լերմոնտովի «Դիմակահանդես», «Պեպո», «Զանգեզուր» եւ այլն):

«Արամ Խաչատրյանը դարձել է մեր փոքր լինելու առասպելի մեծ հերքում, դարձել է մեր փոքր ժողովրդին մեծերի հետ չափելու խորհրդանիշ, դարձել է մեր քաղաքակրթության վկայականը»,-նրան այսպես է գնահատել Համո Սահյանը, իսկ ռուսական երաժշտության դասական Դմիտրի Շոստակովիչը գրել է. **«Երբ խորհում ես Խաչատրյանի մշակութային մեծության շուրջը, հասկանում ես, որ արմատները նրա նկարչական տաղանդի, ազգային պատկանելության, նորարական մտքի եւ միեւնույն ժամանակ դասական ավանդույթներին հավատարիմ մնալու յուրահատուկ համադրության մեջ են»:**

Տարվա ընթացքում հայ նոր կոմպոզիտորական դպրոցի հիմնադրի հիշատակի ոգեկոչման միջոցառումների պակաս չկար: Կապանի արվեստի քոլեջի փոխտնօրեն, թավջութակահար Աշոտ Խաչատրյանի նախաձեռնությամբ անցկացվող «Դեկտեմբերյան երեկոներ» շարքից դասական երաժշտության համերգը «Արամ Խաչատրյան» խորագիրն էր կրում: Մասնակցում էին Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբի ջութակահար Վահե Փարսադանյանը, Երեւանի Պ. Չայկովսկու անվան երաժշտական դպրոցի դասատու, դաշնակահար Արմեն Աղաջանյանը, Երեւանի Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնի նվագախմբի ջութակահար Նարեկ Սահակյանը, ինչպես նաեւ Կապանի արվեստի պետական քոլեջի դասախոսներ, ուսանողներ, երաժշտական եւ հանրակրթական դպրոցների դասատուներ եւ աշակերտներ: Երեկոն մեկնարկեց Արամ Խաչատրյանի «Վալսով»՝ Մ. Լերմոնտովի «Դիմակահանդես» դրամայի համար գրված երաժշտությունից, Նարեկ Սահակյանի, Աշոտ Խաչատրյանի եւ Արմեն Աղաջանյանի կատարմամբ: N2 երաժշտական դպրոցի դասատու Արմենուշ Հովհաննիսյանը կատարեց կոմպոզոտորի «Երգ-պոեմ» ստեղծագործությունը, իսկ քոլեջի ուսանող, միջազգային մրցույթի դափնեկիր Միեր Ամիրջանյանը հնչեցրեց Արամ Խաչատրյանի «Լեզգինկան» (նվագակցող՝ Աստղիկ Գրիգորյան):

Համերգին հնչեցին Արամ Խաչատրյանի «Տոկկատը»՝ Արմեն Աղաջանյանի (դաշնամուր) կատարմամբ, «Նոկտյուրնը»՝ «Դիմակահանդեսից» հնչեցրին Արման Մկրտչյանը (կլարնետ), Աշոտ Խաչատրյանը (թավջութակ), Յանա Ստեփանյանը (դաշնամուր), «Պարը»՝ Նարեկ Սահակյանը (ջութակ), «Օրորոցայինը»՝ «Գայանե» բալետից՝ Նարեկ Սահակյանը (ջութակ), Աշոտ Խաչատրյանը (թավջութակ), Արմեն Աղաջանյանը (դաշնամուր):

Համաշխարհային հռչակ են բերել կոմպոզիտորին երեք կոնցերտները, հատկապես ջութակինը:

էջ 7

Ոչ մի օսմանցի թող չկարծի, թե անանուն եւ շինծու նյութեր շաղ տալով՝ սյունեցիների աչքից դույզն ինչ կգցի Սմբատ եւ Անուշ Օրբելյաններին

Դեկտեմբերի 4-ին սոցիալական ցանցերում շրջանառության մեջ է դրվել մի հոլովակ, որն արտառոց վերնագիր է կրում՝ «Մի կոռումպացված ընտանիքի մասին»:

Որքան էլ զարմանալի է՝ ծպտված հեղինակները նկատի են ունեցել Սմբատ Օրբելյանի բարեհամբավ ընտանիքը:

Հազարավոր սյունեցիների ընկալումների մեջ, մինչդեռ, Սմբատ եւ Անուշ Օրբելյաններն ընդգծված հարգանք վայելող անձնավորություններ են, այդ ընտանիքը շարունակում է մեծ հարգանք վայելել անանուն հոլովակը տարածելուց հետո:

Բազմաթիվ մարդիկ տեսանյութն արդեն իսկ գնահատում են որպես պատվիրված նյութ, ստոր հերյուրանք:

Եվ, այդուհանդերձ, ցանկացանք մի քանի հարց ուղղել Սմբատ Օրբելյանին:

- Սկսենք նրանից, որ Ձեզ բժշկական կենտրոնի տնօրենի պաշտոնից ազատել են 2017թ. հունվարին, տեղյակ ենք նաեւ, որ Սյունիքի նախկին մարզպետ Վահե Հակոբյանի այդ կարգադրությունը Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանում գնահատվել է որպես ապօրինի ու չեղարկվել, ընդ որում՝ Սյունիքի մարզպետարանը չի բողոքարկել առաջին ատյանի դատարանի որոշումը: Ճի՞շտ է այս տեղեկատվությունը:

-Նախ՝ հակիրճ անդրադառնամ տեսահոլովակին: Այդտեղ նշվածը ճշմարտության հետ աղերս ունի միայն անուն-ազգանունների մասով: Մնացյալը՝ ծայրից ծայր, ստահոդ եւ անգրագետ ձեւակերպումներով հորինվածք է: Ինչ վերաբերում է աշխատանքից իմ ազատմանը, Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանը մարզպետի կարգադրությունը ճանաչել է ապօրինի, որը վերահաստատվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

-Տեսանյութի մեջ այսպիսի ձեւակերպում կա՝ հինգ մահվան դեպք քսան օրում... Քանի որ մենք մասնագետ չենք, ուստի եւ չենք ուզում սիրողական մակարդակի եզրակացություն անել. արդյո՞ք այդ մահացությունների առիթով քրեական գործեր են հարուցվել:

- 35 տարի աշխատել եմ Կապանի հիվանդանոցում, եւ չի եղել մի դեպք, երբ կողք կանգնեմ, յուրաքանչյուր դեպքի համար ինձ պատասխանատու եմ համարել:

Ձեր նշած ժամանակահատվածում եղել եմ արձակուրդում: Բայց դա այլ խնդիր է...

Ըստ մեր ունեցած տեղեկությունների՝ նշված դեպքերից ոչ բոլորի առիթով են քրեական գործեր հարուցվել, իսկ հարուցված գործերն էլ արդեն իսկ կարճվել են՝ հանցակազմի բացակայության պատճառով:

Բնականաբար, այդ ամենին նախորդել են դատաբժշկական փորձաքննություններ:

- Իսկ տեսանյութում ակնհայտ այդ իրողությունը շրջանցվում է:

- Մի բան է ինձ հետաքրքրում. ո՞վ է ակնհայտ ստի վրա մոգոնել այդ տեսանյութը, ո՞վ է այդ հորինվածքի վրա փող ծախսել ու գրագիտության առումով ողորմելի ու ծիծաղելի արդյունք գրանցել: Թեպետ այն էլ ասեմ՝ երեւում է, թե ում ականջներն են այդ տեսանյութի հետեւում: Ու այդքանից հետո, կրկնում եմ, բացառիկ անգրագիտություն եւ տգիտություն... Ի՞նչ է ասվում տեսանյութում. երեխային հոգնա են արել, եւ նրա ստամոքսը պոկվել է ու տեղաշարժվելով հանգեցրել թոքերի աշխատանքի խաթարմանը: Նման հիվանդ երեւակայությունն իբրեւ փաստ հրամցնել եւ դնել շրջանառության մեջ... Ենթադրվել է, որ հանրության մի մասը կկարդա եւ ախ ու վախ կանի: Ապշելու բան է, ցնդաբանություն...

- Եթե այդ մահացությունների շարքը փորձենք համեմատել Ձեր պաշտոնաթողումից հետո անցած ժամանակահատվածում Կապանի հիվանդանոցում կատարվածի հետ կամ միջին հանրապետական ցուցանիշի հետ, ի՞նչ պատկեր կունենանք:

-Այդ հիվանդանոցն իմ հարազատ օջախն է եղել, եւ ամենեւին այն կարծիքին չեմ, որ մի մարդու գնալով կամ գալով մահացությունների թիվն ավելանում կամ պակասում է, նաեւ այնպես չէ, որ Կապանի բժշկական կենտրոնում մահացության հետ կապված խնդիրներ են եղել ու կան, որոնք մեծ մտահոգության տեղիք են տվել կամ տալիս: Համենայն դեպս՝ ոչ մեկը, խոսքը նախեւառաջ առողջապահության նախարարության պատասխանատուների մասին է, տագնապ չի հնչեցրել երբեւէ: Սակայն ցավալի դեպքեր լինում են: Ինքնաթիռի աղետից էլ 300 մարդ է մահանում: Պարզապես եղավ ցավալի դեպքերի մի շարք, ինչը որեւէ մեկը չէր ցանկանա...

-Անանուն տեսանյութի մեջ խոսվում է 18-ամյա բնակչուհու մասին, ում հանդեպ իբր բժիշկներից մեկը ոգելից խմիչքի ազդեցության ներքո սեռական ոտնձգություն է կատարել:

-Նախ՝ Ձեր նկարագրած դեպքը եղել է այն ժամանակ, երբ աշխատանքից արդեն ազատված էի:

Անանուն տեսանյութի պատվիրատուին հավանաբար պետք էր այդպիսի մի բեմադրություն, թե տեսեք՝ աղմկահարույց դեպքի առնչությամբ ենք տնօրենին պաշտոնից ազատել: Ուստիեւ՝ չեմ հավատում այդ ամենին, դա միանշանակ շինծու գործ է: Այդ անձնավորությունը, ում վերագրվում է վերոնշյալը, լավ բժիշկ էր, վատ համբավ չուներ, պարզապես հակում ուներ ալկոհոլի հանդեպ: Միասին աշխատելու ընթացքում բազմիցս նրան հորդորել եմ հեռու մնալ խմիչքից:

Եւ մի հանգամանք էլ, որ բնավ երկրորդական չէ. նրանք, ովքեր (իմ կարծիքով) կազմակերպեցին այդ սրբապղծությունը կամ դավադրությունը, պաշտոնի առաջխաղացում ունեցան հետո: Նրանց մատուցած արջի ծառայությունը փոխհատուցվեց պաշտոնի բարձրացմամբ: Ի դեպ, պաշտոնի առաջխաղացում է ունեցել նաեւ անաշխատունակության թերթիկի վաճառք-բեմադրության դերակատարը: Պարզապես ցավում եմ, որ այդ խաղերի հետեւանքով Կապանի բժշկական կենտրոնի վրա, թեկուզ եւ ժամանակավորապես, ստվեր ընկավ, նրա հեղինակությունը խաթարվեց:

- 18-ամյա աղջկա հետ կապված փորձաքննություն արվե՞լ է, թե՞ ոչ. կարծիք է շրջանառվում Կապանում, թե այդ դեպքը փորձաքննությամբ չի հաստատվել, եւ աղջիկը չի ունեցել ապացույց՝ իր հանդեպ սեռական ոտնձգությունը հաստատող:

-Տեսանյութում նշվում է, թե իբր Ձեր պաշտոնավարման օրոք թույլ եք տվել բազմաթիվ սխալներ, եւ մասնավորապես Ձեզ մեղադրում են օնկոլոգիական հիվանդներին անվճար հասանելիք դեղորայքի վաճառքի մեջ:

-Իմ աշխատանքից ազատվելուց հետո մարզպետի կողմից տասնյակ ստուգումներ են իրականացվել հիվանդանոցում, եւ այնպես չէ, որ ստուգողներն իմ բարեկամներն են եղել: Վստահեցնում եմ՝ եթե մի փոքր բացթողում, թերացում գտնեին, ինձ պատասխանատվության կենթարկեին օրենքի ամբողջ խստությամբ:

- Կարող ե՞ք նույնն ասել անաշխատունակության թերթիկների հետ կապված բամբասանքի առնչությամբ:

- Գիտե՞ք, հենց որ կոռուպցիայի մասին խոսում են, խորհրդային ժամանակներից սկսած, առաջինը մատնանշում են՝ բժիշկներ, ուսուցիչներ... Տեսանյութի հեղինակները հնարել են վարկած, թե իբր Սմբատ Օրբելյանն ստեղծել է հանցավոր մի խումբ, որն անաշխատունակության թերթիկներ է վաճառել: Մեծագույն սուտ է, մարդիկ իրենց արշինով են ամեն ինչ չափում: Պատկերացնո՞ւմ եք, թե ինչ կանեին ինձ, եթե նման մի փաստ հայտնաբերեին:

-Նույնը կարող եք ասել ապօրինի վճարովի հիվանդասենյակների՞ մասին, ինչպես ձեւակերպված է անանուն տեսանյութի մեջ:

-Այդպիսի բան մեր հիվանդանոցում չի եղել երբեք: Վճարովի հիվանդասենյակ հասկացություն եղել է շատ կարճ ժամանակ՝ յոթ-ութ տարի առաջ, որից հետո այդ ծառայությունը փակվել է:

Մի հետաքրքիր նկատառում՝ այդ առիթով. տեսանյութի մեջ ինձ փորձել են վերագրել այն, ինչ տեսականորեն կամ ոմանց հիվանդ երեւակայությամբ հնարավոր է վերագրել բժշկական որեւէ հիմնարկի:

-Տեսանյութում նշվում է, որ բժշկական կենտրոնի դիահերձարանի կազմում գործում էր սգո սրահ, առանց որի ծառայությունների դիահերձումը գրեթե անհնարին էր:

-Թող մի դեպք վկայակոչեն... Որքան անբարոյական պիտի լինի մարդ, որ դիմի այդ քայլին, մանավանդ բժիշկը, ում գործունեությունը մարդկային ճակատագրերի հետ է կապված...

Պատվիրատուն, ինչպես երեւում է այդ դրվագում եւս, պատրաստ է եղել նույնիսկ խաղալ ննջեցյալների հարազատների ու մերձավորների զգացմունքների հետ, մեր ավանդույթների, մեր սրբությունների հետ, միայն թե...

Ի վերջո Կապանում բոլորը գիտեն, թե ովքեր են նման ծառայություն իրականացնում տարածաշրջանում:

-Տեղափոխվենք այլ ոլորտ, տեսանյութի մեջ կարծես թե մեղադրանք կա որոշ լրատվամիջոցների հասցեին,

Հեպգրություն-արձագանք

Այդ օրերի իշխանության փշրանքները, սակայն, ժամանակ առ ժամանակ (ե՛ւ մարզում, ե՛ւ մայրաքաղաքում) փորձում են կենդանության պատրանք ստեղծել:

Դա նկատվում է հատկապես այն ժամանակ, երբ բացահայտվում է ասպատակների սյունիքյան ապօրինությունների մի նոր դրվագ եւս:

Դեկտեմբերի 14-ին syuniacyerkir.am կայքում հրապարակվել էր ճանաչված սյունեցի Սմբատ Օրբելյանի հարցազրույցը՝ ***«Ոչ մի օսմանցի թող չկարծի, թե անանուն եւ շինծու նյութեր շաղ տալով՝ սյունեցիների աչքից դույզն ինչ կգցի Սմբատ եւ Անուշ Օրբելյաններին»:***

Նույն օրվա վերջին (այդ հրապարակումից ժամեր անց) գաղութարարների փշրանքներն աղմուկի նոր ալիք բարձրացրին:

Ընդ որում՝ ոչ թե հարցազրույցի բովանդակությունն են քննարկում կամ կասկածի տակ առնում, այլ «Սյունյաց երկրին» ու նրա խմբագրին հայհոյում:

Ընդ որում՝ այդ վնգստոցը հրապարակում են Արմավիրի տարածքում գրանցված եւ Սյունիքում տարածվող ընտանեկան մի թերթոնում:

Աղմուկի գլխավոր դերակատարն ավազակապետի անլվա թաշկինակն է (նրա ամբողջական անուն-ազգանունը Սյունիքում հայտնի չէ, ինչի համար եւ այլ հորջորջումով էին հիշում նրան՝ մարզպետի մամուլի խոսնակի բլանկի պահապան):

Այդ մեկը, ով զրկված է ինքնուրույն նախադասություն գրելու տարրական հնարավորությունից եւ երկու տարի շարունակ եղբոր եւ հոպարի կիսագրագետ խզբզոցով էր սյունիքյան հանրությանը փորձում ներկայանալ, դատողությունների վարժանք է ձեռնարկել՝ նաեւ ընդդեմ «Սյունյաց երկրի»:

Անլվա թաշկինակը վերստին թշվառականի կարգավիճակում է. խոսում է մի բանի մասին, որից հեռու է հազարավոր կիլոմետրերով:

Իր ցնցոտիներով Բանի աշխարհ մտնել փորձող տղեկը մամուլը բաժանում է գույների՝ դեղին եւ ոչ դեղին (ժամանակին Աժ խցկված հոպարից կամ ախպորից է երեւի լսել):

Հատկապես Սյունիքում եւ հատկապես վերջին երկու տարում, մինչդեռ, երեւույթները գույների բաժանելը սովորական գործելակերպ էր:

«Սյունյաց երկրին» նույնպես որեւէ գույն վերագրելն արտառոցություն չէ:

Իսկապես, ինչո՞ւ կարող էր դեղին (նույնիսկ խամրած դեղին) մարզպետ լիներ Հայաստանի ամենառազմավարական մարզում, բայց այդ երկրամասում չլիներ դեղին մամուլ:

Կամ՝ ինչո՞ւ կարող էին մարզպետի օգնականները, խորհրդականները, մյուս սպասավորները լինեին կապույտ, բայց մարզի թերթը չլիներ դեղին:

Կամ՝ ինչո՞ւ կարող էր ավազակապետը մարզի բոլոր սոդոմականներին հավաքել-բերել հանրակրթության ոլորտ՝ իր շեղված անձին սպասարկելու համար, իսկ թերթը չլիներ իր խմբագրի հեղինակած նյութերը հրապարակող-տարածող հարթակ:

Եվ, այդուհանդերձ, «Սյունյաց երկիրը» իսկապես գույն ունի՝ հրե ցոլք, պուրպուրե գույն...

Դա այն լրատվամիջոցն է, որը մեն-մենակ, հաղթահարելով աներեւակայելի փորձություններ, կարողացավ Սյունիքում տապալել օսմանցիների երկամյա իշխանությունը:

Հիմա էլ զբաղված է նրանց փշրանքներից երկրամասն ազատելու ազգանպաստ ու սյունիքանպաստ գործով:

Դա այն լրատվամիջոցն է, որի դեմ ոտքի հանվեց մի ամբողջ ոհման՝ հայտնի ձեռնարկության միջոցներով սնվող, որի դեմ արծաթի զորությամբ ոտքի հանվեց պետական ամբողջ մեքենան (Երեւանից մինչեւ Մեղրի), բայց մնաց անվնաս ու աննահանջ:

Ու այդ լրատվամիջոցին ու նրա խմբագրին օսմանցիներից յուրաքանչյուրը դեռ շատ է հիշելու, հիշելու է մինչեւ իր կյանքի վերջին րոպեն:

Պատկերացնո՞ւմ եք, թե էլ ինչերի ականատես կլինեինք Սյունիքում, թե էլ ինչ վայրագություններ, վնասարարություն կանեին հրոսակները, եթե չլիներ «Սյունյաց երկիրը»...

Եվ ուրեմն՝ երիցս փա՜ռք Բարձրյալին, որ անցնող տարում մեզ օժտեց ուժով՝ վերջակետելու օսմանցիների երկամյա իշխանությունը Սյունիքում:

Իսկ անլվա թաշկինակին ներում ենք:

Ժողովրդական իմաստությունն է ասում՝ ***«Շունը շնից, երկուսը մի տնից»:***

Բա եթե չվայրահաչի, էլ ինչո՞ւ պիտի պահեն ու լափլիզելու հնարավորություն տան...

Վերջերգ եւս մեկ հորինված քրեական գործի

Ուղիղ մեկ տարի առաջ Սյունիքի մարզպետի աթոռը զբաղեցնող անձնավորությունը մեծամասշտաբ գրոհ ձեռնարկեց Սյունիք գյուղի միջնակարգ դպրոցի տնօրեն Լիլիթ Առաքելյանի դեմ:

Պատճառներն ի սկզբանե հայտնի էին մարզի հանրությանը:

Տնօրենը 2017թ. դեկտեմբերյան մարզխորհրդի նիստում, երբ մարզպետը վիրավորում էր ներկա գտնվողների, այդ թվում՝ կանանց պատիվն ու արժանապատվությունը, վրդովմունք հայտնեց՝ **«Բա մի տղամարդ չկա՞ այս դահլիճում, որ չափ դնի մարզպետի բերանին»**. որպեսզի անց տնօրենի խոսքը հասցրել էին մարզպետին:

Բայց դպրոցի տնօրենը նաեւ այլ «հանցանք» էր գործել:

Նա, հակառակ մարզպետի կարգադրության, ոչ միայն ընթերցում էր «Սյունյաց երկիր», ոչ միայն նրա էջերում իր գիտական հոդվածներն էր հրապարակում, այլեւ դարձել էր այդ թերթի բաժանորդ, ինչը խստորեն արգելված էր տարածքային ու համայնքային իշխանությունների կողմից:

Եվ այդ ամենի համար…

2018թ. հունվարի 23-ին, հակառակ Հայաստանի Հանրապետության օրենքների, Լիլիթ Առաքելյանն ազատվեց «Սյունիքի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականություններից:

Մինչ այդ գործի էր դրվել դպրոցը պատվերով ստուգելու՝ արդեն փորձված եւ ստոր մեթոդը:

Գործի էր դրվել սպառնալիքն ու շանտաժը. մարզպետը տնօրենին անձամբ էր ասել, թե գաղտնալսվել են նրա հեռախոսային խոսակցությունները:

«Ստուգման» արդյունքներով մոգոնված ակտը՝ իբր դպրոցում հայտնաբերված յուրացումների մասին, առանց տնօրենից պարզաբանում պահանջելու, առանց «հայտնաբերված» թերացումները քննարկելու, ուղարկվեց ոստիկանության Կապանի բաժին:

Այդ օրերում Սյունիքի ոստիկանությունը գրպանային էր՝ վարչության պետից, բաժնի պետերից մինչեւ հետաքննիչ:

Ու Կապանի ոստիկանության բաժնում 2018թ. փետրվարի 8-ին հարուցվեց թիվ 41152118 քրեական գործը եւ ուղարկվեց Սյունիքի մարզային քննչական վարչություն:

Տասը ամիս շարունակ «լուսահոգի» մարզպետի շները պաշտոնական գրություններով, լրատվամիջոցների հրապարակումներով, վարձու բանսարկուների ոռնոցով լուրեր էին տարածում, թե Լիլիթ Առաքելյանը քրեական հանցանք է գործել, պետական միջոցներ յուրացրել, թե նրան հենց դրա համար էլ աշխատանքից ազատել են, թե …

Իսկ այդ ընթացքում տեղի էր ունենում հանգամանալից նախաքննություն, տեղի էին ունենում հարցաքննություններ, փորձաքննություններ…

Ոհմակը սրտատրոփ սպասում էր իր հաղթանակին, ոհմակն ամեն ինչ անում էր՝ խժռելու մարզի հանրակրթական դպրոցների լավագույն տնօրեններից մեկին եւս, բայց …

2018թ. դեկտեմբերի 13-ին ՀՀ քննչական կոմիտեի Սյունիքի մարզային քննչական վարչության ավագ քննիչ Նարեկ Աբգարյանը կայացրեց երկար սպասված որոշումը՝ **«Թիվ 41152118 քրեական գործով «Սյունիքի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի նախկին տնօրեն… Լիլիթ Առաքելյանի կողմից իր պարտականությունները ոչ պատշաճ կատարելու՝ պաշտոնական անփութության արդյունքում անզգուշությամբ 642.600 ՀՀ դրամ վնաս պատճառելու դեպքով Լիլիթ Առաքելյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդում չիրականացնել՝ հանցակազմի բացակայության հիմքով»:**

Իսկ ի՞նչ էր իրականում տեղի ունեցել Սյունիքի միջնակարգ դպրոցում:

Ըստ քննիչի նշված որոշման՝ **«…Կապան քաղաքի բնակիչ Անահիտ Վարդազարյանն՝ աշխատելով «Սյունիքի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի հաշվապահ, պաշտոնեական դիրքն օգտագործելով, 2014թ. սեպտեմբեր ամսից մինչեւ 2017թ. դեկտեմբեր ամիսն ընկած ժամանակահատվածում տարիֆիկացիոն ցուցակով նախատեսված 50 հազար ՀՀ դրամ աշխատավարձի փոխարեն ամեն ամիս համապատասխան փաստաթղթերում իրեն որպես աշխատավարձ ձեւակերպել ու ստացել է հաստիքացուցակով նախատեսված աշխատավարձից 1. 512. 000 ՀՀ դրամ ավելի գումար, ինչի հետեւանքով պետությանը պատճառվել է խոշոր չափերով՝ շուրջ 1. 512. 000 ՀՀ դրամի վնաս»:**

Ի դեպ, պետությանը պատճառված վնասն ամբողջությամբ վերականգնվեց նախաքննության ընթացքում՝ Անահիտ Վարդազարյանի կողմից:

Խոսքը, ինչպես տեսնում եք, առնչվում է 2014թ. սեպտեմբերից մինչեւ 2017թ. դեկտեմբեր ընկած ժամանակաշրջանին:

Իսկ Լիլիթ Առաքելյանն այդ դպրոցում տնօրենի պաշտոնը վարել է 2016թ. հուլիսի 29-ից:

Այսինքն՝ պետությանը հասցված վնասը մեծապես պատճառվել է մինչեւ Լիլիթ Առաքելյանը:

Եվ հավելագրման այդ մեխանիզմը, պարզվում է, ներդրվել է մինչեւ Լիլիթ Առաքելյանի պաշտոնավարում, երբ տնօրենն Արթուր Մնացականյան անփառունակն էր:

Եվ, որքան էլ տարօրինակ է, հավելագրման այդ մեխանիզմն աննկատ է մնացել Սյունիքի մարզպետարանի համապատասխան բաժինների ու վարչությունների աշխատակիցների կողմից:

Մի խոսքով՝ Լիլիթ Առաքելյանի պաշտոնավարման ընթացքում այդկերպ պետությանը պատճառվել է 642 հազար ՀՀ դրամի վնաս, որը, ըստ քննիչի վերոնշյալ որոշման՝ **«սույն դեպքում էական չի համարվում, որպիսի հանգամանքներից ելնելով Լիլիթ Առաքելյանի արարքում բացակայում է ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմը»:**

Անշուշտ, հարգանք եւ պատիվ քննիչ Նարեկ Աբգարյանին՝ օրինապահության, անաչառության, անկաշառության եւ, իհարկե, քաջության համար:

Հարգանք Լիլիթ Առաքելյանին, ով կարողացավ համարձակորեն տեր կանգնել իր եւ իր գլխավորած դպրոցի արժանապատվությանը, կարողացավ ճշմարտությունը ջրի երես հանել՝ չվախենալով զրկանքներից ու հետապնդումներից:

Սակայն տարօրինակ է օրվա իշխանությունների պահվածքը, ինչպես որ տարօրինակ էր երեկվա իշխանությունների պահվածքը:

Վահե Ա. Հակոբյանը մինչեւ այսօր պատասխանատվության չի ենթարկվել այդ եւ նման այլ կամայականությունների համար:

Ոստիկանության մարզային վարչության պետը, Կապանի այդ օրերի ոստիկանապետը, քրեական գործեր հարուցող գործիք-հետաքննիչը նույնպես պատասխանատվության չեն ենթարկվել:

Մարզպետարանի կրթության վարչության համապատասխան աշխատակիցները եւս, ովքեր նպաստել են օրվա մարզպետին, ովքեր փորձել են վարկաբեկել մեծահամբավ տնօրենին, մինչեւ հիմա ոչ միայն պատասխանատվության չեն ենթարկվել, այլեւ շարունակում են պաշտոնավարել ու քրքջալ մարզի մտավորականության վրա:

Տարօրինակ է, որ ներքեւից մինչեւ վերեւ բոլորը գիտեին՝ Լիլիթ Առաքելյանի դեմ գործը հնարված է, բայց…

Ոչ ոք այդպես էլ չհամարձակվեց բռնել չարագործի ձեռքը, պաշտպանել ճանաչված մտավորականի, հանրակրթական գործի լավագույն կազմակերպչի իրավունքները…

Հ.Գ.

Դեռեւս 2018թ. փետրվարի 23-ին Լիլիթ Առաքելյանը հայցադիմում է ներկայացրել Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարան:

Նա պահանջում է վերացնել «Սյունիքի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի մասին Սյունիքի մարզպետի 2018թ. հունվարի 23-ի կարգադրությունը, իրեն վերականգնել նախկին աշխատանքում եւ բռնագանձել հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի միջին աշխատավարձը:

Մի շարք օբյեկտիվ պատճառներով ձգձգված դատաքննությունը թեւակոխել է ակտիվ փուլ:

Վստահ ենք՝ մոտ ապագայում ականատես կլինենք արդարության եւս մեկ հաղթանակի:

Սամվել Ալեքսանյան

այնտեղ նաեւ «Սյունյաց երկիր» թերթի գլխագիրն է ի ցույց դրվում, եւ հոդվածների վերնագրեր կան: Հետաքրքրականն այն է, որ վերնագրերը կան, բայց թե վերնագրերի տակ ինչ է գրված, չեն ցանկացել ցույց տալ կամ ընթերցել: Ըստ երեւույթին ձեռնտու չի եղել հրապարակել այդ հոդվածների բովանդակությունը: Ծպտյալ հեղինակները նկատի են ունեցել նաեւ «Հայելի» հաղորդաշարի՝ իբր կողմնակալ պահվածքն ու փորձել կապ ստեղծել Ձեր ու Սահմանադրական դատարանի նախագահի միջեւ:

- «Հայելի» հաղորդաշարում որեւէ անգամ չեմ հյուրընկալվել, այդ հաղորդաշարը, որքանով տեղյակ եմ, երբեք չի անդրադարձել Կապանի հիվանդանոցին. տեսանյութի այդ դրվագը նույնպես մանիպուլյացիա է: Հրայր Թովմասյանին մեծապես հարգում եմ, ճանաչել եմ այն ժամանակ, երբ որդիս՝ Արամ Օրբելյանը, աշխատում էր արդարադատության նախարարությունում, եւ տղայիս հարսանիքի քավորն է եղել: Ընդամենն այսքանը: Մնացյալն իրականության հետ հեռավոր աղերս չունեցող վայրահաչություն է…

Միեւնույն ժամանակ ափսոսում եմ, որ տարածված նյութում անհիմն կերպով շահարկվել է ինձ համար շատ հարգելի մարդկանց անունը:

- Մի բան եւս մնում է չպարզաբանված. ինչո՞ւ տեսանյութը հանրությանը ներկայացվեց հենց այս պահին, երբ Ձեզ՝ բժշկական կենտրոնի տնօրենի պաշտոնից ազատելուց անցել է երկու տարի: Եւ հանկարծ ինչ-որ ծպտված մարդիկ հիշում են Սմբատ Օրբելյանին ու գրոհում ոչ միայն նրա, այլեւ նրա ընտանիքի անդամների վրա:

- Այդ ամենի պատվիրատուն հայտնի է: Ինձ համար միանգամայն պարզ է, թե ով է մոգոնել այդ տեսանյութը, նա նաեւ վճարել է այն կայքերին, ովքեր տեսանյութը դրել են շրջանառության մեջ: Եվ ինչո՞ւ այս պահին… Կրտսեր որդիս՝ Արթուրը, ով տնտեսագիտության մեջ համարում ունի հանրապետությունում, վերջերս վերլուծություններ է արել Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի հետ կապված. այդ վերլուծությունները, մի քանի տեսանյութով, նույնպես շրջանառության մեջ են դրված: Դրանցում տեղ գտած փաստարկները ողջամիտ կասկած են առաջացնում ինչ-ինչ հանցավոր արարքների վերաբերյալ: Եւ ովքեր կատարել են ենթադրյալ այդ հանցանքները, պետք է Արթուրի տեսահոլովակներին պատասխանեին «համարժեք» քայլով…

-Ձեր ասածից ենթադրելի է, եւ դա Սյունիքում շատ-շատերի կարծիքն է, որ անանուն տեսանյութ-վայրահաչությունը չէր ծնվի, նման ակտիվությամբ շրջանառության մեջ չէր դրվի, եթե մի քանի օր առաջ Արթուր Օրբելյանը տեսանյութերով չբարձրաձայներ ենթադրյալ չարաշահումների մասին, որ կատարվել են Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատում:

- «Հայաստան» համահայկական հիմնադրամի վերջերս կազմակերպած դրամահավաքի ժամանակ հանգանակվեց 11 միլիոն դոլարից քիչ ավելի գումար: Եւ դա համարում ենք համայն հայության ներդրումը մեր պետականաշինության գործում: Իսկ Արթուր Օրբելյանը, ելնելով տնտեսագիտական հաշվարկներից, խոսում է մի ձեռնարկությունում դրանից քառասնապատիկ անգամ ավելի միջոցների հնարավոր անհետացման մասին…Եվ ոչ մի արձագանք:

-Ի՞նչ կուզենայիք ավելացնել ասվածին:

-35 տարի բուժսպասարկման ոլորտում ծառայել եմ իմ ժողովրդին: Չի կարող գտնվել մի մարդ, ով կարող է ասել, թե Սմբատ Օրբելյան բժիշկն իր հետ շահադիտական նպատակներով հարաբերությունների մեջ է եղել: Իմ մանագիտության մեջ եղել եմ արդար եւ ազնիվ, նույնը՝ իմ գործընկերների հետ փոխհարաբերություններում: Ինչո՞ւ եմ սա ընդգծում: Չեմ կարող հիասթափությունս չհայտնել այն մարդկանց հանդեպ (Կապանի բժշկական կենտրոնի իմ որոշ գործընկերների մասին է խոսքը), որոնց ժամանակին հնարավոր եւ անհնար օգնությունն եմ ցուցաբերել ու աջակցել ամենատարբեր հարցերում: Բայց որեւէ մեկն ինչ-որ ձեւով չարձագանքեց ստի եւ զրպարտության այդ արշավին: Չէ՞ որ խոսքը ոչ միայն իմ ընտանիքի, այլ մեծահամբավ կոլեկտիվի մասին է:

Մի դիտարկում էլ. այդ տեսանյութ-վնգստոցի հեղինակները մեզանից լավ գիտեին եւ գիտեն, որ մատնանշված «հանցանքները» ինձ վերագրվող, գոյություն չունեն եւ չեն ունեցել ընդհանրապես: Ընդամենը պետք էր աղմուկ, պետք էր շոու, պետք էր հանրության ուշադրությունը շեղել այն ամենից, ինչ կատարվել է Սյունիքում:

Եւս մի կարեւոր հանգամանք. եթե որեւէ մեկը պատասխանատվություն ստանձնի այդ տեսանյութի համար (իբրեւ հեղինակ կամ տեղեկատվության լեգիտիմ աղբյուր), ապա հենց վաղը կհարուցենք դատական հայց՝ տեսանյութի զրպարտչական էությունն ապացուցելու համար:

- Շնորհակալություն զրույցի համար, Ձեզ՝ հաջողություն:

Զրույցը՝ Սամվել Ալեքսանյանի եւ Վահրամ Օրբելյանի

Հայրենիք-Սփյուռք առնչությունները 21-րդ դարասկզբին

(Նոր ուսումնասիրություն)

Հայ ժողովրդի գերակշիռ մասը ապրում է հայրենիքից հեռու՝ աշխարհի զանազան մասերում: Դա պայմանավորված է հայ ժողովրդի պատմական ճակատագրով, պետականության երկարատև բացակայությամբ, մշտապես կրկնվող ջարդերով, կոտորածներով եւ համատարած հայրենազրկումով:

21-րդ դարասկզբին Սփյուռքը քանակապես արդեն մի քանի անգամ գերազանցում էր Մայր-հայրենիքում ապրող հայությանը: Հայրենիք-Սփյուռք հարաբերություններին, որոնք ընդգրկում են կյանքի բոլոր ոլորտները՝ հասարակական, քաղաքական, մշակութային, ծավալուն նոր ուսումնասիրությամբ անդրադարձել է վաստակաշատ պատմաբան, պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր Էդիկ Մինասյանը:

«Հայրենիք-Սփյուռք առնչությունները 21-րդ դարասկզբին (2001-2017թթ.)» խորագրով աշխատությունը հրապարակվել է ԵՊՀ պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի եւ հայոց պատմության ամբիոնի որոշմամբ: Աշխատությունը բաղկացած է երկու գլուխներից, առաջաբանից ու վերջաբանից, օգտագործած աղբյուրների և գրականության ցանկից:

Առաջին գլխում («Հայրենիք-Սփյուռք հասարակական-քաղաքական առնչությունները 21-րդ դարի սկզբին») փաստառատ տվյալներով և դրվագներով ներկայացված են 21-րդ դարասկզբի հայկական սփյուռքի ընդհանուր բնութագիրն ու առանձնահատկությունները: Ըստ այդմ, պարզ եւ հստակ է դառնում, որ հայկական Սփյուռքը ամենատարածված համայնքներից է աշխարհում եւ հայերի բնակության վայր հանդիսանում են աշխարհի 117 պետություններ: Ամենամեծ համայնքների թվին են պատկանում ՌԴ (2միլիոն 600հազար), ԱՄՆ-ի (1միլիոն 600հազար), Ֆրանսիայի (700հազար), Ուկրաինայի (500հազար), Վրաստանի (250հազար), Արգենտիայի (128հազար), Իրանի (120հազար), Բրազիլիայի (100հազար), Լիբանանի (140հազար), Կանադայի (90հազար), Ավստրալիայի (85հազար) հայ համայնքները: Խորապես համոզիչ կերպով փաստարկվում է, որ Սփյուռքի

հայկական համայնքներում հայագիտական հարուստ արժեքների պահպանմանը մեծապես նպաստում են հայագիտական տարաբնույթ հաստատություններն ու կենտրոնները: Ներկայացված տվյալների համաձայն, ներկայումս աշխարհի տարբեր երկրներում գործում են 107 հայագիտական կենտրոններ: Իսկ Սփյուռքը ցանցային ու կազմակերպված դարձրին ավելի քան 44 համահայկական, համասփյուռքյան հասարակական, եկեղեցական, մշակութային, բարեգործական կազմակերպություններ, հայ առաքելական եկեղեցին, ՀՅԴ-ն, ՌԱԿ-ը, ՍԴՀԿ-ն, ՀԲԸՄ-ն՝ իրենց կից կառույցներով, որոնք լրացնում են կրթամշակութային, առողջապահական, մարզական միությունները, հանձնախմբերն ու հիմնադրամները: Սփյուռքում հայապահպանման գործում որոշակի դերակատարում ունեն մոտ 1000-ի հասնող ամենօրյա ու մեկօրյա դպրոցներն ու դասընթացները, որոնք շուրջ 400 հազար երեխաների մայրենի լեզուն ուսուցանելու սրբազան գործով են զբաղված: Խորությամբ դիտարկվում ու քննարկվում է խորհրդաժողովների եւ համահայկական համանման այլ միջոցառումների դերը Հայաստան-Սփյուռք հասարակական-քաղաքական հարաբերությունների նոր փուլի ձեւավորման եւ զարգացման գործում:

Հնարավորինս լայն ասպեկտով հեղինակը ներկայացնում է համասփյուռքյան քաղաքական կազմակերպությունների եւ կառույցների հասարակական-քաղաքական դերակատարությունը հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման եւ արցախյան հիմնահարցի լուծման ուղղությամբ:

Երկրորդ գլխում («Հայրենիք-Սփյուռք սոցիալ-տնտեսական կապերի ամրապնդումը») պրոֆ. էդ. Մինասյանը փաստառատ շարադրանքով քննում եւ դիտարկում է Սփյուռքի ներդրումները Հայաստանի եւ Արցախի տնտեսության մեջ եւ հիմնադրամների դերն ու նշանակությունը Հայաստանի եւ Արցախի տնտեսության զարգացման գործում: Հանրահայտ է, որ հատկապես 1991 թվականից հետո ընկած ժամանակահատվածը լի էր աշխարհաքաղաքական բազմաթիվ ցնցումներով, որոնք իրենց ազդեցությունը թողեցին ինչպես Հայաստանի տնտեսական զարգացման, այնպես էլ տարբեր փուլերում Հայաստան-Սփյուռք սոցիալ-տնտեսական ակտիվության վրա:

Եվ եթե 1988թ. դեկտեմբերից այդ հարաբերությունների գլխավոր ուղղությունը երկրաշարժի գոտում ցուցաբերվող օգնությունն էր, Արցախյան պատերազմի և շրջափակման պայմաններում ազգաբնակչության նվազագույն կարիքների բավարարումը, ապա 1994-2007թթ. ուշադրությունը սկսեցվեց տնտեսության վերականգնման և ձեռնարկատիրության զարգացման վրա: Ըստ գրքում վկայակոչված փաստերի, այդ տարիներին Հայաստանի տնտեսության մեջ ներդրումներ կատարած օտարերկրացիների շուրջ 69%-ը սփյուռքահայեր էին:

Իսկ 21-րդ դարասկզբի երկրորդ տասնամյակում Սփյուռքի մասնակցությունը Հայաստանի տնտեսական կյանքին դարձել է առավել կազմակերպված ու նպատակային:

Հեղինակի խորին համոզվածությամբ ու փաստարկվածությամբ, անուրանալի է սփյուռքի դերակատարությունը հայրենիքում այնպիսի ոլորտների զարգացմանը, ինչպիսիք են դրամատնային համակարգը, զբոսաշրջությունը, գյուղատնտեսությունը, տեղեկատվական տեխնոլոգիաները, մի շարք ծառայություններ:

ՀՀ տնտեսության վրա Սփյուռքի ազդեցությունը իրականացվում է հետևյալ ձևով՝ ուղղակի ներդրումների իրականացում, անուղղակի ներդրումների իրականացում, դրամական փոխանցումների իրականացում, սպառման խթանում (զբոսաշրջություն), միջազգային առևտրի խթանում:

Բազմաթիվ ու բազմակերպ են հայրենիք-Սփյուռք առնչությունները սոցիալական ոլորտում, հատկապես գիտական, կրթական և մշակութային ասպարեզներում, որոնց հեղինակը անդրադառնում է առանձին ենթաբաժնով: «Սփյուռքահայ կազմակերպությունների եւ միությունների աջակցությունը հայրենիքին» ենթագլխում մեկ առ մեկ, հանգրվան առ հանգրվան ներկայացվում են այն նախաձեռնություններն ու ջանքերը, որով աշխարհի տարբեր երկրների սփյուռքահայ համայնքները էապես նպաստել են երկրաշարժից ավերված հայրենիքի եւ պատերազմից մեծապես տուժած Արցախի տնտեսության վերականգնմանը:

Աշխատությունը գրված է գրագետ շարադրանքով, պարզ եւ հստակ ոճով, պատմաբանին հատուկ տրամաբանությամբ եւ մտածողությամբ:

Թերեւս այն ավելի կշահեր, եթե հեղինակը նաեւ որոշակի չափով կանգ առներ հայրենիք-Սփյուռք հարաբերություններում նախկինում եղած եւ ներկայումս էլ առկա կնճռոտ կետերի, բացթողումների ու շտկումների ենթակա այլ հարցադրումների վրա:

Հ. Գ. Ի դեպ, նշենք, որ պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր Էդ. Մինասյանը վերջերս ԼՂՀ նախագահ Բ. Սահակյանի կողմից պարգևատրվել է «Վաչագան Բարեպաշտ» մեդալով՝ ՊԲ-ի զորամասերում ակտիվ հայրենասիրական աշխատանքներ իրականացնելու համար:

Արմեն Կարապետյան
Պատմական գիտությունների թեկնածու,
հրապարակագիր

Վախճանվել է Ալմարա Անտոնյանը

Սպասումներով լի տարեմուտը «Սյունյաց երկիր» թերթի խմբագրության համար մթագնեց մի գույժով. երկրային կյանքին անժամանակ հրաժեշտ էր տվել կրթության գործի նվիրյալ Ալմարա Անտոնյանը: Երկար տարիներ մեր թերթի բարեկամն էր, պարբերաբար հանդես էր գալիս հրապարակումներով. վերջին հոդվածը տպագրվել էր անցած տարի՝ «Վերին Խոտանան. ամեն մի կածան՝ մի հուշապատում» վերնագրով, որ համընդգրկուն ակնարկ էր ամենայն Հայոց կաթողիկոս Մովսես Խոտանանցու (Տաթեւացու) գյուղի՝ Վերին Խոտանանի պատմության: Նրա հրապարակումները տպագրվել են նաեւ հանրապետական մամուլում: Ստեղծագործում էր, բանաստեղծությունների թեման հայրենի եզերքն էին ու աշխատավոր մարդը: Սյունիքի գրական միավորման անդամ էր, ՀՀ ուսուցիչների հինգերորդ համագումարի պատգամավոր: Համագործակցել է Գիտությունների ազգային ակադեմիայի Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի հետ, զբաղվել բանահավաքչությամբ, բազմաթիվ բանահյուսական նշխարներ փրկել անդառնալի կորստից: Յուրաքանչյուր գյուղական համայնքում լիներ Ալմարա Անտոնյանի նման հայրենի եզերքի մի նվիրյալ, մենք կունենայինք մեր բնակավայրերի փոքրիշատե ամբողջական պատմությունը: Ունի տպագրված ստեղծագործություններ:

Ալմարա Անտոնյանը ծնվել է 1949թ. հոկտեմբերի 1-ին, ծառայողի ընտանիքում: Ավարտել է Շրվենանցի միջնակարգ դպրոցը՝ գերազանց առաջադիմությամբ: 1969թ. ընդունվել Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի հեռակա բաժինը եւ ավարտել է 1974թ.: Ուսմանը զուգընթաց աշխատել է Կապանի շրջանային պիոներ տան վարիչ: 1971թ. ՀԿԿ Կապանի շրջկոմի բյուրոյի որոշմամբ գործուղվել է Վերին Խոտանանի ութամյա դպրոց՝ որպես հայոց լեզվի եւ գրականության ուսուցչուհի: 1987թ. նշանակվել է դպրոցի տնօրեն եւ պաշտոնավարել մինչեւ 2004 թվականը: Այնուհետեւ՝ մինչեւ 2013թ., նույն դպրոցում շարունակել է աշխատել հայոց լեզվի եւ գրականության ուսուցչուհի: Ամուսնացած էր, ունի չորս զավակ:

«Սյունյաց երկիր» թերթի խմբագրակազմը խոր վշտով ցավակցում է հանգուցյալի մերձավորներին ու հարազատներին:

«Սյունյաց երկիր»

Փոքր դրամաշնորհային ծրագրերի ներկայացման հրավեր Սյունիքի մարզում գրանցված հասարակական կազմակերպությունների համար

«Պահպանվող Տարածքների Աջակցման Ծրագիր-Հայաստան» (ՊՏԱԾ-Հ) ծրագրի իրականացման գրասենյակը ՊՏԱԾ-Հ Փոքր Դրամաշնորհային Բաղադրիչի (ՓԴԲ) շրջանակներում Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության անունից հրավիրում է Սյունիքի մարզում գրանցված բոլոր հասարակական կազմակերպություններին՝ մասնակցելու փոքր դրամաշնորհային ծրագրերի մրցույթին:

Ծրագիր՝ «Պահպանվող Տարածքների Աջակցման Ծրագիր-Հայաստան» (ՊՏԱԾ-Հ)

Հղում No՝ BMZ-N 2009.6657.2

Ծրագրի դոնոր՝ KfW Զարգացման բանկ (KfW), Գերմանիա

Դրամաշնորհ տրամադրող՝ ՀՀ բնապահպանության նախարարությունը (Ծրագրի գործադիր մարմին) եւ ՊՏԱԾ-Հ Ծրագրի Իրականացման Գրասենյակը

Պայմանագիր՝ Դրամաշնորհի/Նվիրաբերության տրամադրման

Հայտարարության սկիզբ՝ Դեկտեմբերի 26, 2018

Հայտադիմումների ներկայացնելու վերջնաժամկետ՝ Փետրվարի 15, 2019, ժամը՝ 18:00

Հայտադիմումների ներկայացման ձեւը՝ Հայտադիմումները պետք է ուղարկվեն էլեկտրոնային, ինչպես նաեւ թղթային տարբերակներով.

Հայտադիմումների թղթային փաթեթների ներկայացման հասցեներ՝ ՊՏԱԾ-Հ ք. Կապանի գրասենյակ, ՀՀ Սյունիքի մարզ, ք. Կապան, 6/1 Մ. Ստեփանյան, Հասմիկ Խաչոյանին կամ ՊՏԱԾ-Հ ք. Երեւանի գրասենյակ,ՀՀ Կառավարության 3-րդ շենք, 5-րդ հարկ, սենյակ N 544, Մարտիրոս Նալբանդյանին

Հայտադիմումների էլեկտրոնային տարբերակների ներկայացման հասցեներ՝ h.khachoyan@consecoard.am, m.nalbandyan@consecoard.am

Հայտադիմումների լեզու՝ Հայերեն

Մրցույթի մասնակցության հայտադիմումը կազմված է հետեւյալ փաստաթղթերից՝

1.Ծրագրային հայտ
2.Գործողությունների պլան
3.Ծրագրի բյուջե
4.Հասարակական կազմակերպության գրանցման վկայականի պատճեն
5.Հասարակական կազմակերպության կանոնադրության պատճեն

1-3 կետերում նշված ձեւաթղթերի, ՊՏԱԾ-Հ ՓԴԲ ուղեցույցի կամ այլ լրացուցիչ տեղեկատվության ձեռքբերման համար գրել ՊՏԱԾ-Հ ծրագրի սոցիալ-տնտեսական հարցերով մասնագետ Հասմիկ Խաչոյանին՝ հետեւյալ էլ-փոստի հասցեով. h.khachoyan@consecoard.am զանգահարել +374 (093) 54 99 55 հեռախոսահամարով կամ այցելել հետեւյալ հղումով՝ http://mnp.am/pages/225:

«Պահպանվող տարածքների աջակցման ծրագիր-Հայաստան» (ՊՏԱԾ-Հ) ծրագիրը մաս է կազմում Գերմանիայի Դաշնային Հանրապետության Տնտեսական համագործակցության եւ զարգացման նախարարության կողմից (BMZ No: 2009.6657.2) մեկնարկած Կովկասյան նախաձեռնության:

Սույն ծրագիրը իրականացվում է համաձայն Գերմանիայի Դաշնային Հանրապետության եւ Հայաստանի Հանրապետության միջեւ կնքված միջկառավարական ֆինանսական համաձայնագրերի, ինչպես նաեւ KFW բանկի եւ ՀՀ Բնապահպանության Նախարարության միջեւ 28.05.2013թ. ստորագրված առանձին համաձայնագրի:

Կապանա տան գեղանի դուստր Մարիամ Սարգսյանի ծննդյան օրն էր

Երբ իմացա, որ ամենակրտսեր գործընկերուհուս՝ Մարիամ Սարգսյանի ծննդյան օրն է՝ առաջին իսկ պահին չհամարձակվեցի գրիչ վերցնել՝ տարակուսելով՝ ի՞նչ պիտի ասեմ երկու տասնամյակը նոր-նոր բոլորած, ուսանողական նստարանից դեռ չբարձրացած պարմանուհու մասին, որ ուշագրավ լինի թեկուզ եւ մարդկային տեսակետից:

Բայց հետադարձ հայացք ձգելով վերջին երկու տարվա մեր անցած ճանապարհին՝ համոզվեցի, որ ոչ միայն ասելիք, այլեւ նրա կերպարը մատնացույց անելու հիմքեր ունեմ:

Ինքը, սովորելուն զուգահեռ, «Սյունյաց երկիր» եկավ այն ժամանակ, երբ խմբագրության աշխատակիցներն ու գործընկերները հետապնդվում էին իշխանական մեքենայի ամբողջ հզորությամբ ու դաժանությամբ:

Եկավ՝ գիտակցելով հնարավոր բացասական հետեւանքներն իր համար:

Եկավ, քանզի պարբերականի գաղափարախոսությանը նույնախոհ լինելու եզրեր կային:

Եկավ իր երիտասարդական ճախրանքով ու մաքրությամբ, հիմնավոր գիտելիքներով՝ զորություն բերելով խմբագրությանը:

Եկավ ու իրեն վերապահված դերը՝ թերթի տպագիր տարբերակը ձեւավորելու գործը պատշաճ կատարեց եւ սիրվեց ու մարդկային իր տեսակը մեզ համար սպասված ու փնտրված դարձրեց;

Եվ եթե վերջին երկու տարում կարողացել ենք խմբագրությունում ապահովել ստեղծագործական ակտիվ ընթացք, կարողացել ենք գտնել իրականությունը եւ տալ ժամանակի պատկերը, ապա շնորհիվ նաեւ Մարիամ Սարգսյանի:

Հայտնի ճշմարտություն կա՝ լրատվամիջոցի ասելիքն ինչոր առումով նույնական է գրականության ասելիքին, արվեստի ասելիքին: Իսկ այդ ասելիքը նախեւառաջ մարդն է, սերը նրա նկատմամբ, պատասխանատվությունը նրա ճակատագրի, երկրի այսօրվա եւ վաղվա հանդեպ:

Եվ նրանք, ովքեր պրոֆեսիոնալ գործելակերպով (ու ոչ սիրողական մակարդակով) հանգրվանում են լրատվամիջոց արարելու արեւոտ այդ հարթավայրում, ովքեր առաքելություն են ունենում այդտեղ, հարգանքի արժանի են:

Մարիամն այդ հարթավայրի արժանավոր բնակիչներից է, պրոֆեսիոնալներից:

Բայց եւ եզակիներից է, որ մարդկային իր պահվածքով անդորրություն ու հայեցություն է պարտադրում շրջապատին, գործընկերներին:

Մի խոսքով՝ նա անձնավորումն է լուսավորի ու կայունի, համերաշխության ու բարեկամության:

Մյուս կողմից՝ ինքը մեզ համար իրականությունը նորովի՝ երիտասարդական դիտակետից բացահայտողներից է: Դրա շնորհիվ է, որ հաճախ մենք ենք միանում նրա հայացքներին, եւ ոչ ինքը՝ մեր ընկալումներին:

Մարիամը մեր օրերի երիտասարդների առաջադեմ փաղանգի եւ սյունիքյան մաքրամաքուր միջավայրի զավակն է: Մինչ այդ, սակայն, Արթուր Սարգսյան եւ Լուսինե Հայրապետյան հարգարժան ծնողների դուստրն է. նրանց՝ անկեղծ շնորհակալություն՝ նման դուստր դաստիարակելու համար:

Իսկ Մարիամին…

Ծնունդդ շնորհավոր:

Քո իղձերի, ծրագրերի իրականացում եմ մաղթում, նաեւ՝ երջանկություն:

Վստահ եմ՝ 2019-ին հաջողությամբ ավարտելու ես ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղի «Ինֆորմատիկա եւ կիրառական մաթեմատիկա» ֆակուլտետը եւ շարունակելու ես ուսումդ մագիստրատուրայում:

Հույս ունեմ, որ Երեւան տեղափոխվելուց հետո չի ավարտվելու մեր համագործակցությունը: Ընդհակառակը՝ թերթի հետ գործընկերությունը նոր փուլ է թեւակոխելու, քանզի մերօրյա «Սյունյաց երկիրը» այլեւս անելիք ունի նաեւ մայրաքաղաքում:

Ի դեպ, վաղն Աստծո որդու ծննդյան օրն է. ընդունեք մեր շնորհավորանքը լուսապսակ այդ տոնի կապակցությամբ եւս. «Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ»:

Սամվել Ալեքսանյան
5 հունվարի 2019թ

Ծնունդդ շնորհավոր, հարգելի Ռիտա Օվչյան

Նրա յուրաքանչյուր օրը սկսվում եւ ավարտվում է դպրոցական ակտիվ կյանքի կազմակերպմամբ:

Միշտ ժպտերես, կանացի յուրահատուկ հմայքով, բարյացակամ եւ սիրալիր հայացքով, բայց եւ խստապահանջ ու ամեն հարցում հետեւողական,- այդպիսին է Կապանի N2 ավագ դպրոցի տնօրեն Ռիտա Օվչյանը:

Բնավորությամբ պրպտող է, սրտացավ դպրոցական կյանքի ամեն մի խնդրի նկատմամբ, օժտված ստեղծագործական նուրբ ու քնարական ձիրքով:

Ամենուրեք փորձում է գտնել լավն ու գեղեցիկը:

-Աշակերտների մեջ պետք է սերմանել լավն ու բարին, գեղեցիկի ընկալումը,-հաճախ է հիշեցնում նա:

Իսկ դպրոց մտնելիս այդ ամենի ականատեսն ես դառնում՝ սկսած դպրոցի բակը բոլորած վարդերի թփերից մինչեւ դպրոցի միջանցքների բազմապիսի վահանակներ ու կահավորված դասասենյակներ:

Տիկին Օվչյանը նորարարության կողմնակից է: Եվ այդ է պատճառը, որ չնայած դպրոցի բազմաբնույթ ուսումնադաստիարակչական աշխատանքներին՝ պատասխանատվությամբ է մասնակցել «Արարատյան բակալավրիատի» Կրթության գերազանցության ազգային ծրագրին ու մեկամյա տքնաջան եւ լարված աշխատանքի շնորհիվ ստացել հավաստագիր:

-Մարդ պետք է ամբողջ կյանքում սովորի, ձգտի նորին, արդիականին,-ասում է Ռիտա Օվչյանը:

Այս տարի հոբելյանական է Ռիտա Օվչյանի համար:

Կապանի N2 ավագ դպրոցի մանկավարժական կոլեկտիվը սրտանց շնորհավորում է տիկին Օվչյանի ծննդյան տարեդարձը, մաղթում առողջություն, հաջողություններ թե՛ անձնական, թե՛ հասարակական կյանքում, ակնկալում ստեղծագործական նոր վերելքներ:

Սիրելի՛ տիկին Օվչյան

Թող անսպառ լինի Ձեր ժպիտը, լինեք միշտ այդպես գեղեցիկ, կանացի, խոհեմ եւ լայնահայաց:

Ձեզ՝ անսպառ եռանդ ու բարեկեցություն:

Կապանի N2 ավագ դպրոցի մանկավարժական կոլեկտիվ
5 հունվարի 2019թ.

Արամ Խաչատրյանի հետ

էջ 3

«Արտասահմանում մեծ ճանաչման համար պարտական եմ Արամ Խաչատրյանին եւ նրա ջութակի կոնցերտին: Այդ ստեղծագործությամբ ինձ ջերմ ու գրկաբաց ընդունում էին անգամ այնտեղ, որտեղ բախտ չէի ունեցել ելույթ ունենալ» - ասել է կոնցերտի առաջին կատարող Դավիդ Օյստրախը: Այս համերգին ջութակի կոնցերտի 3-րդ մասը կատարեց Վահե Փարսադանյանը (նվագակցող՝ Արմեն Աղաջանյան):

«Կարեւոր չէ, թե ինչպես կտատանվեմ տարբեր լեզուների միջեւ, ես մնում եմ հայ, բայց եվրոպացի հայ, ոչ ասիացի հայ: Ուրիշ հայ կոմպոզիտորների հետ մենք կստիպենք Եվրոպային եւ աշխարհին՝ լսելու մեր երաժշտությունը: Եվ երբ նրանք լսում են մեր երաժշտությունը, մարդիկ վստահորեն ասում են՝. պատմե՛ք մեզ այդ ժողովրդի մասին, ցո՛ւյց տվեք երկիրը, որ այդպիսի արվեստ է ստեղծում»,- ասել է Արամ Խաչատրյանը: Իբրեւ այս ամենի լեյտմոտիվ Կապանի N 3 միջնակարգ դպրոցի աշակերտուհի Եվա Հակոբյանն ասմունքեց Գեւորգ Էմինի «Մենք» ստեղծագործությունը:

Որպես երեկոյի ավարտ՝ հնչեց «Սուսերով պարը» «Գայանե» բալետից՝ Վահե Փարսադանյանի (ջութակ), Աշոտ Խաչատրյանի (թավջութակ), Արմեն Աղաջանյանի (դաշնամուր) կատարմամբ:

Երեկոն վարում էր արվեստի քոլեջի հայոց լեզվի եւ գրականության դասախոս Լուսինե Հարությունյանը: Համերգի ավարտին երեկոյի կազմակերպիչ Աշոտ Խաչատրյանը շնորհակալություն հայտնեց Կապանի լեռնահարստացման կոմբինատի տնօրինությանը՝ երեկոն հովանավորելու համար եւ քոլեջի տնօրեն Վարդան Քոչարյանին՝ երեկոյի կազմակերպման անմիջական աջակցության համար: Այս անգամ դահլիճում ներկայացված էին կապանցի գեղանկարիչ Բորիկ Մինասյանի աշխատանքները:

«Կապանը հիասքանչ քաղաք է, իսկ նրա հանդիսականը, անկասկած, երաժշտասեր է եւ երաժշտությունը գնահատող, արդեն մոռացել եմ, թե քանի անգամ եմ այստեղ հանդես եկել համերգներով, երեւի տարվա ընթացքում երկու անգամ լինում եմ Կապանում»,- «Սյունյաց երկրին» փոխանցեց դաշնակահար, երգեհոնահար Արմեն Աղաջանյանը:

Վահրամ Օրբելյան

Պարգեւները հասան տերերին

Կապանի արվեստի մանկական դպրոցի սաները անցած ամիսներին հաջողություններ են գրանցել «Նոր ձեռքեր» նկարչության եւ դեկորատիվ կիրառական արվեստի եւ «Էտյուդ -2018» հանրապետական մրցույթ -փառատոներում: Վերջինում **«Իմ անունն Արամ է»** ներկայացմամբ թատերարվեստի բաժնի 4-րդ դասարանի սաները (գեղարվեստական ղեկավար՝ Արթուր Գաբրիելյան) գրավել են առաջին տեղը: Հաղթողի կոչումը նվաճելու համար կրթօջախի թատերարվեստի բաժնի սաները 2019 թվականի հուլիսին հրավիրվել են մասնակցելու Բուլղարիայի Վառնա քաղաքում անցկացվող «Սլավոնական պսակ» միջազգային փառատոնին:

Նախօրեին կրթօջախում կայացած Ամանորին նվիրված միջոցառման ժամանակ դպրոցի տնօրեն Մարինա Նահապետյանը շնորհակալագրեր հանձնեց մրցույթ -փառատոներում աչքի ընկած սաներին: Այնուհետեւ տարբեր խմբերի սաները հանդես եկան համերգային ծրագրով: Տարբեր երաժշտական գործիքներով նրանք կատարեցին հայ, ռուս, արեւմտաեվրոպացի կոմպոզիտորների ստեղծագործություններ, հնչեցին Ամանորին եւ Սուրբ ծննդին նվիրված երգեր: Միջոցառման ավարտին դահլիճ մտավ Ձմեռ պապը՝ Նոր տարվա մաղթանքներ հղելով ներկաներին:

Վահրամ Օրբելյան

Վաստակած կոչում

«Սպորտն ինձ համար մի ամբողջ կյանք է», - այս կարգախոսով է ապրել եւ աշխատել ՀՀ վաստակավոր մարզիչ Արսեն Պետրոսյանը:

Շրջապատում հարգված, հոգատար, կարգապահ, լավ ամուսին եւ ծնող. այսպես են բնութագրում նրան ճանաչողները: Հայաստանի սպորտի, մասնավորապես աթլետիկայի պատմության մեջ մնայուն հետք թողած Արսեն Պետրոսյանը վառ անհատականությամբ կարողացել է վայելել շրջապատի սերն ու հարգանքը:

Ծնվել է Սյունյաց բարձրաբերձ աշխարհի գյուղերից մեկում՝ Ջորաստանում, բանվորի ընտանիքում: 1976թ. ավարտել է Կապանի Հունան Ավետիսյանի անվան միջնակարգ դպրոցը: Խորհրդային բանակում պարտադիր զինծառայությունն անցնելուց հետո 1986թ. ավարտել է ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտը: Սովորելուն զուգընթաց դպրոցում դասավանդել է «Ֆիզիկական կուլտուրա» առարկան:

Մանկուց զբաղվել է թեթեւ աթլետիկայով եւ պատանեկան տարիքում արդեն իսկ ցուցաբերած լուրջ արդյունքների շնորհիվ ընդգրկվել ՀՀ աթլետիկայի պատանիների, ապա երիտասարդների ու մեծահասակների հավաքականների կազմում: Բազմիցս եղել է ՀՀ աթլետիկայի պատանիների, երիտասարդների եւ մեծահասակների առաջնությունների հաղթող եւ մրցանակակիր, մասնակցել համամիութենական մրցումների եւ գրավել մրցանակային տեղեր:

1984 թվականից անցել է մարզչական գործունեության եւ աշխատում է առայսօր:

2004 թվականից «Կապանի աթլետիկայի մասնագիտացված մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ -ի տնօրենն է:

Հավասարակշռված, զուսպ, լրջախոհ, ազնիվ ու անկաշառ անձնավորություն է Արսեն Պետրոսյանը, ում արժանիքները սովորաբար պատված են համեստության քողով: Նրա՝ մարդ տեսակը հեռու է սնապարծությունից եւ մեծամտությունից: Իսկ գործերը փաստում են ծանրակշիռ ու շոշափելի արդյունքներ: Ահա նրա լավագույն սաների արդյունքները.

Մարատ Սարգսյան, սպորտի վարպետ /հեռացատկ, լավագույն արդյունքը՝ 7.60մ/՝ 1991թ.-Խորհրդային Միության պատանիների չեմպիոն /ՌԴ, ք.Ջերժինսկ/:

Մերուժան Սարգսյան, սպորտի վարպետ /հեռացատկ, լավագույն արդյունքը՝ 7.92մ/՝ 1995թ.-ԱՊՀ ժողովուրդների սպարտակիադայի չեմպիոն /ք.Սանկտ-Պետերբուրգ/, 2002թ.-Եվրոպայի II լիգայի առաջնություն՝ 3-րդ մրցանակակիր /Սերբիա, ք. Բելգրադ/, 2001թ- Համահայկական խաղերի կրկնակի չեմպիոն:

Էրիկ Նուրիջանյան, սպորտի վարպետ /եռացատկ, լավագույն արդյունքը՝16.56մ/՝ 1998թ. - Համաշխարհային պատանեկան խաղերի եզրափակիչ փուլի մասնակից /ՌԴ, ք.Մոսկվա/, 2001թ.-Աշխարհի՝ մինչեւ 20 տարեկանների առաջնություն /Չիլի, Սանտյագո/, Եվրոպայի գավաթի խաղարկության 4-րդ տեղ, /ք.Ռիգա/, 2005թ.–Եվրոպայի ձմեռային առաջնության մասնակից /Իսպանիա, ք.Մադրիդ/, Համահայկական խաղերի արծաթե մեդալակիր:

Հայկանուշ Բեկլարյան, սպորտի վարպետի թեկնածու, եռացատկի ՀՀ ռեկորդակիր /հեռացատկ, եռացատկ, լավագույն արդյունքը՝6.01մ, 13.15մ/՝ 2004թ.-Միջազգային պատանեկան խաղերի չեմպիոն՝ /ԱՄՆ, ք. Քլիվլենդ/, 2005թ.-Եվրոպայի պատանիների առաջնություն՝ 3-րդ տեղ, /Իտալիա, ք.Լիգնանո/, Աշխարհի՝ մինչեւ 18 տարեկանների առաջնություն՝ 4-րդ տեղ /Մարոկկո, ք.Մարաքեշ/, Աշխարհի՝ մինչեւ 20 տարեկանների առաջնության մասնակից /Չինաստան, ք. Պեկին/, 2007թ- Համահայկական խաղերի չեմպիոն:

Սերգեյ Հարությունյան, սպորտի վարպետի թեկնածու /եռացատկ, լավագույն արդյունքը՝15.97մ /, 2006թ - Եվրոպայի գավաթի խաղարկություն, 4-րդ տեղ /Սերբիա, Նովի Սադ/, մի շարք միջազգային մրցումների մասնակից:

Լեւոն Աղասյան, միջազգային կարգի սպորտի վարպետ /եռացատկ, լավագույն արդյունքը՝ 16.65մ/՝ 2013թ.- Եվրոպայի՝ ավագ տարիքի պատանիների առաջնություն չեմպիոն / Իտալիա, ք. Ռիեթի/, 2014թ- Աշխարհի՝ մինչեւ 20 տարեկանների առաջնություն՝ 5-րդ տեղ, 2016թ.- Ռիո դե Ժանեյրոյի օլիմպիական խաղերի մասնակից: Բալկանյան երկրների առաջնությունների քառակի չեմպիոն:

Արամայիս Սարգսյան, /եռացատկ, լավագույն արդյունքը՝ 15.94մ/, սպորտի վարպետ՝ 2016թ.-Եվրոպայի՝ միչեւ 18 տարեկանների առաջնության եզրափակիչ փուլի մասնակից /Վրաստան, ք. Թբիլիսի,/ 2017թ.- Եվրոպայի՝ միչեւ 20 տարեկանների առաջնության եզրափակիչ փուլի մասնակից /Իտալիա, ք. Գրոսսետտո/, 2018թ.- Աշխարհի՝ ավագ տարիքի պատանիների առաջնություն՝ 4-րդ տեղ / Ֆինլանդիա, ք. Տամպերե/, 2016թ-Բալկանյան երկրների մինչեւ 18 տարեկանների առաջնության բրոնզե մեդալակիր /Սերբիա, ք. Կրուշեվաց/, Բալկանյան երկրների մինչեւ 20 տարեկանների առաջնության բրոնզե մեդալակիր / Թուրքիա, ք. Ստամբուլ/:

Այսօր Արսեն Պետրոսյանը 60 տարեկան է: Նա իր կյանքը գնահատում է ոչ թե ապրած տարիներով, այլ այն գործերով, որ հասցրել է կատարել:

Որպես մարզիչ՝ նա իր սաների ձեռք բերած հաջողություններով ուրույն հետք է թողել ՀՀ աթլետիկայի զարգացման գործում:

Վաստակավոր մարզիչը համոզված է, որ մարդիկ, որոնք անցնում են սպորտի դպրոցը, հրաժարվում են վատ սովորություններից, հավատ ու կամք են ձեռք բերում սեփական ուժերի եւ հնարավորությունների նկատմամբ, սովորում զոհողությունների գնալ դրված նպատակին հասնելու համար:

Արսեն Պետրոսյանը օպտիմիստ է: **«Առանց լավատեսության, - ասում է նա, - կյանքում բոլոր հնարավորությունները աչքիցդ կվրիպեն»:** Բայց եւ մերկ օպտիմիզմը սխալ համարելով՝ ռեալիստ լինելու կողմնակից է: **«Լավատեսությունը պետք է իր հիմքերը ունենա,** - շարունակում է մարզիչը: **-Կարելի է ասել, որ ես օպտիմիստ - ռեալիստ եմ»:** Նրա կարծիքով՝ հաղթանակներին պետք է շատ զգույշ վերաբերվել, գլխապտույտ չունենալ դրանցից ու չտարվել «աստղային» հիվանդությամբ: Սկզբում ստանալ բավականություն, իսկ հետո՝ եզրակացություն անել, հաշվի առնել հաղթանակի օբյեկտիվ եւ սուբյեկտիվ պատճառները: **«Հաղթանակը պետք է նոր հաղթանակներ ծնի»**, - ամփոփում է նա:

ՀՀ ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի զարգացման գործում ունեցած վաստակի եւ ներդրած ավանդի, երկարամյա մարզչական գործունեության համար Արսեն Պետրոսյանը պարգեւատրվել է տարբեր կարգի պատվոգրերով եւ շնորհակալագրերով եւ մեդալներով: Վերջերս ծննդյան 60-ամյա տարեդարձի կապակցությամբ Սյունիքի մարզպետի՝ Հ.Պողոսյանի կողմից արժանացել է շնորհակալագրի:

Բազմիցս ճանաչվել է ՀՀ աթլետիկայի տարվա լավագույն մարզիչ:

2002 թվականին շնորհվել է Հայաստանի Հանրապետության վաստակավոր մարզչի կոչում:

2013 թվականին Կապան քաղաքի 75-ամյակի առթիվ նրան շնորհվեց «Կապան» ոսկե մեդալ:

2018 թվականին ՀՀ սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարարի կողմից շնորհվել է «Ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի պատվավոր աշխատող» կոչումը:

Արսեն Պետրոսյանի համոզմամբ, ինչքան էլ մարդ հաջողակ լինի գործում ու հարգված շրջապատում, նրա ամենամեծ ձեռքբերումը երջանիկ ընտանիք ստեղծելն է: Եվ այսօր երջանիկ է Արսեն Պետրոսյանը, որովհետեւ ունի ամուր ընտանիք՝ սիրող եւ սիրված կին, երկու արժանավոր զավակ՝ ուստր եւ դուստր, երկու սիրասուն թոռնիկ: Նա հպարտությամբ է նշում, որ իր 7-ամյա թոռնիկը կրում է իր անունազգանունը եւ ձգտում է արժանի լինել այդ կոչմանը:

ՀՀ վաստակավոր մարզիչ, ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի պատվավոր աշխատող Արսեն Պետրոսյանը իր 60-ամյակի առթիվ անկեղծացել է. **«Այդ տարիներին մարդը տիրապետում է այն բանին, ինչի վրա խարսխվում են ճշմարիտ նվաճումները, ձեռք է բերում այն, ինչ կարելի է տալ ուրիշներին, ճանաչում այն, ինչ կարելի է սովորեցնել, հարթում այն, ինչի վրա կարելի է կառուցել»:**

Շնորհավոր պատվավոր կոչումդ, վաստակավոր մարզիչ:

Արշամ Սարգսյան
ՀԱՕԿ-ի Սյունիքի մարզի ներկայացուցչության տնօրեն,
աթլետիկայի ֆեդերացիայի գործադիր տնօրեն

Սյունիքում վերահսկվում է սեյսմիկ իրավիճակը

էջ 1

տությունում սեյսմոլոգներ չեն պատրաստում, այլ հիմնարկի համապատասխան աշխատակիցներին ուղարկում են վերապատրաստման՝ բացը լրացնելու համար: Բացի այդ պահանջված են երկրաֆիզիկոսները, շինարարության մասնագետները՝ շենք -շինություններ ուսումնասիրողները: Ցածր աշխատավարձն էլ առանձնապես չի ձգում այստեղ աշխատելու: Տնօրենը խնդրահարույց համարեց այն, որ ծառայությունն ընդգրկված չէ ապահովագրական համակարգում՝ սոցփաթեթների մեջ:

Կենտրոնի կարեւոր գործառույթներից է սեյսմիկ վտանգի աստիճանի գնահատումը, որ իրականացվում է դիտակայանների միջոցով:

Քանի՞ դիտակայան է գործում հարավային բաժանմունքում եւ ինչպիսի՞ն է դրանց տեխնիկական զինվածությունը:

Այս հարցի պատասխանն իմացանք կենտրոնի՝ միջանցքի պատին փակցված դիտացանցային քարտեզից, ըստ որի՝ դիտակայաններ են գործում Գորիսում, Խանածախում, Սիսիանում, Կարմրաքարում, Խոտանանում, Եղվարդում, Կապանում, Կապանի Ներքին Վաչագան թաղամասում, Լեռնաձորում: Ժամանակին Մեղրիում էլ էր գործում, այժմ չկա, աշխատանքներ են տարվում այն վերագործարկելու ուղղությամբ: Կայանների մի մասը՝ Գորիս, Խանածախ, Եղվարդ, Կապան, Սիսիան, Ներքին Վաչագան, զինված են ժամանակակից սարքավորումներով, մյուսների վերազինումն ընթացքի մեջ է: Դիտացանցերը մտնում եմ հանրապետության սեյսմիկ պաշտպանության համակարգի մեջ եւ միացված են ինֆորմացիայի մշակման կենտրոնի հետ, որին շուրջօրյա ինֆորմացիա ենք հաղորդում:

Տնօրենի փոխանցմամբ՝ չնայած Կապանը սեյսմիկ մյուս բնակավայրի համեմատ գտնվում է ավելի թույլ (առաջին սեյսմիկ) գոտում, սակայն սեյսմիկ ռիսկը, այսինքն՝ վտանգը Կապանում ամենաբարձրն է: Դա պայմանավորված է բարձրահարկերի ցածր սեյսմակայունությամբ, թույլ գրունտներով եւ այլն: Քիչ չի պատահում, երբ մարդիկ բնակարանների ինքնակամ շինարարություններ են անում, մանավանդ շենքի հիմքը թուլացնող վերակառուցումներ, ինչը նվազեցնում է շենքի սեյսմակայունությունը:

- Իսկ որքանո՞վ է հնարավոր կանխագուշակել երկրաշարժը:

- Դասական իմաստով կանխագուշակել հնարավոր չէ, - պատասխանում է զրուցակիցս:

Չենք կարող ասել, թե որտեղ, որ ժամին կարող է երկրաշարժ լինել: Բայց մենք վերահսկում ենք սեյսմիկ իրավիճակը՝ ելնելով տարբեր երկրաֆիզիկական տվյալներից, օրինակ, ընդերքի ջրերի մակարդակից, բաղադրության փոփոխություններից, ջրի ռադիոակտիվությունից եւ այլն: Այդ պարամետրերի փոփոխությունը մեզ հնարավորություն է տալիս կանխագուշակել ընդերքի այն փոփոխությունը, որոնք հանգեցնում են երկրակեղեւի փոփոխությունների: Իսկ «Լեռնաձոր» երկրաքիմիական կայանում որոշվում են ընդերքային ջրի բաղադրությունը, ռադիոակտիվությունը, տարբեր գազերի եւ այլ բնութագրեր:

Ասվածին հավելենք, որ մեր մարզում վերջին ժամանակներս երկրաշարժ գրանցվել է 2018թ. սեպտեմբերի 17-ին՝ Դաստակերտ քաղաքում (օջախի 10կմ խորությամբ, 1.9 մագնիտուդով)՝ 2-3 բալ ուժգնությամբ:

Երկրաշարժին պատրաստ լինելու համար պիտի իմանալ աղետին դիմակայելու վարքականոնները, ամենակարեւորը՝ խուճապի չմատնվել: Ցավալին այն է, որ ուժեղ երկրաշարժի դեպքում ընդհատվում են հեռախոսակապն ու էլեկտրամատակարարումը: Ընդհանրապես վնասվում են բոլոր կոմունիկացիաները: Երկրաշարժի ժամանակ հակացուցված է օգտվել վերելակից, էլեկտրական սարքավորումներից, շենքի ստորին հարկերում գտնվելիս անհապաղ պիտի դուրս գալ եւ հեռանալ բաց տարածություն, վերին հարկերում գտնվելիս կամ ստորին հարկերից դուրս չգալու դեպքում պատսպարվել ապահով տեղերում՝ հեռու մնալով արտաքին պատերից եւ պատուհաններից: Ընկնող բեկորներից կարելի է պաշտպանվել՝ մտնելով սեղանների, մահճակալների տակ: Փողոցում գտնվելիս հեռանալ շենքերից եւ էլեկտրահաղորդալարերից՝ դեպի բաց տարածություն:

Կիմ Բաղալյանի փոխանցմամբ՝ մարզի հանրակրթական դպրոցներում պարբերաբար անցկացվում են ուսումնական վարժանքներ՝ դպրոցականների՝ երկրաշարժի ժամանակ գործելու գիտելիքները բարձրացնելու նպատակով: Նաեւ հայտնեց, որ մարզկենտրոնի N1 եւ N7 դպրոցներում կատարվելու են ուսուցում եւ տարհանում երկրաշարժի ժամանակ վարքականոնների վերաբերյալ, որում ընդգրկված է նաեւ Սյունիքի մարզային փրկարարական վարչությունը: Նաեւ ցուցադրվելու է օրվա թեմային առնչվող տեսաֆիլմ: Մարդկանց պատրաստված լինելը երկրաշարժին մեծ դեր ունի վերահաս տարերքին դիմագրավելու համար: Կալիֆոռնիայում տեղի ունեցած երկրաշարժը համարյա նույն ուժգնությունն ուներ, ինչ Սպիտակում, բայց այդտեղ զոհերի քանակը տասնյակներով էր հաշվվում, իսկ Սպիտակում…

Վահրամ Օրբելյան

Սյունյաց երկիր

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
«ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր՝
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռ.՝ **(0285) 5 25 63,**
(091) 45 90 47,
(077) 45 90 47:
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
էլ.կայք՝ www.syuniacyerkir.am

® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:

«ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ»
բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

QR կոդ

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1165, գինը՝ 100 դրամ:
Ստորագրված է տպագրության 11.01.2019թ.: